


Դ. ԵՐԵՒ

Հ 32-2  
4 208

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՖԻՆ

БИБЛИОТЕКА  
ИИ СТИТУТА  
ВОСТОЧНОСЕДЕННИЯ  
Академии Наук  
СССР



ԽՈՀԾ ԺՊՂԱՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ 1931

16.04.2013

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТ  
ВОСТОЧНЫХ НАУК  
Академии Наук  
СССР

07 FEB 2010

## ՄԵՆՔ ՅԵՎ ՆՐԱՆՔ

1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունից անցել ե արդեն 14 տարի և այդ ամբողջ ժամանակի ընթացքում ԽՍՀ Միությունը գտնվում է բուրժուական յերկրների շրջափակման մեջ: ԽՍՀ Միությունը և կապիտալիստական պետությունները ներկայացնում են յերկու աշխարհ, յերկու սիստեմ: ԽՍՀ Միության մեջ ժողովրդական տնտեսությունը զարգանում և պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, կապիտալիստական աշխարհում տիրում և բուրժուական դիկտատուրան՝ կամ բացարձակորեն ('ֆաշիզմ') և կամ բուրժուական դեմոկրատիայի քողարկված ձևով: Նտեսության խորհրդային սիստեմի առավելությունները կապիտալիստական սիստեմի նկատմամբ ներկայումս արգեն հայտարկված են կատարյալ պարզուցությամբ: Կապիտալիստական յերեններում մենք ականատես ենք իր խորությամբ և ուժգնությամբ մի չտեսնված տնտեսական ճգնաժամի (կրիզիս):

Բուրժուական յերկրներում տիրող ժամանակակից տնտեսական ճգնաժամի խոշորագույն հատկանիշներից մեկն ե հանդիսանում արդյունաբերական և գյուղատնտեսական (ագրարային) ճգնաժամների խճողումը: Գործազուրկների քանակությունը կապիտալիստական յերկրներում մի առելի թիվ և կազմում — 35 միլ. մարդ: Ֆարբիկների և գործարանների 40—60 տոկոսը անդորր եւ Բանվոր դասակարգի յեկամուտները խիստ կրծատվել են. որինակ, գերմանական բանվորի գնողական միջին ուժը կազմում է կենսամինիմումի մոտ 70%-ը:

Այլ պատկեր ենք տեսնում ԽՍՀ Միության մեջ: Խորհրդային Միության պլանավորվող արդյունաբերության արտադրությունը 1929—30 տարում անցած տարվա համեմատությամբ ավելացել է 25% ով. հացահատիկների արագործությունը բարձրացել է

1930 թվին 21,8%-ով, բամբակի արտադրությունը՝ 55,8%-ով,  
շաքարի ճակընդեղի արտադրությունը՝ 142,8%<sup>0</sup>-ով։ ԽՍՀ Միու-  
թյան տնտեսական բուռն աճի առանձնահատկություններից մեկն  
է հանդիսանում այն փաստը, վոր Խորհրդային Միության սոցիա-  
լիստական շինարարությունը կատարվում է այն ժամանակի յերբ  
բուրժուական յերկրներում տիրում և տնտեսական դաժան ճգ-  
նաժամ։

Վորքան ել մեծ լինք տնտեսական կապերի նշանակությունը  
համաշխարհային տնտեսության հետ՝ Խորհրդային Միության  
տնտեսական զարգացման համար, բայց և այնպես բուրժուական  
յերկրների ճգնաժամը չի անցնում սոցիալիստական յերկրի սահ-  
մաններից այս կողմը։ Այստեղ քայլայում, այստեղ — վերելք,  
վորկություն։

Կապիտալիստական յերկրներում մենք տեսնում ենք մեքե-  
նագործության քայլայումը կամ նվազումը։ Գաղութային և կի-  
սազաղութային յերկրներում մեքենաների գործածությունը ավելի  
շատ և կրծատված, քան արդյունաբերական յերկրներում։ Բրա-  
զիլիայի կառավարությունը արգելել և մեքենաների ներմուծումը  
յերեք տարվա ընթացքում։ Խորհրդային Միության շուկան միակ  
շուկան և, վորը ընդարձակվում է, մինչդեռ ներկայումս ընդհան-  
րապես սեղմվում են մնացած բոլոր արտաքին շուկաները։

Դա պատահական յերեւոյթ չե, վորովհետու զա հետեանք և  
այն գերազանցության, վորը ունի խորհրդային սիստեմը կապի-  
տալիստական սիստեմի դիմաց։

Վոչ մի ժամանակ, նույնիսկ իր զարգացման ամենափայլուն  
շրջանում, կապիտալիստական արդյունաբերությունը չի հասել  
զարգացման այնպիսի հսկայական թափերի, ինչպիսին մենք տես-  
նում ենք Խորհրդային Միության մեջ։ Միության արդյունաբե-  
րության արտադրության աճը, վորը վերջին տարիներում տա-  
տանվում եր 21—25 տոկոսի շրջանակում և բարձրացել ե 1931 թ.  
մինչև 45<sup>0</sup>-ի, 2—4 պետամ գերազանցում և այն ամենամեծ թափը,  
վոր ունեցին Հյուսիսային Միացյալ Նահանգները անցյալ դարի  
70-ական թվականներին։

Խորհրդային Միության տնտեսության զարգացման հսկայա-  
կան թափերը (տեմպ) լիովին իրագործելի յեն դարձնում այն  
ուկալարող լոգունը, վորը դրված է Խորհրդային Միության

տնտեսական զարգացման առաջ, այն եւ ռհանել և առաջ անց-  
նել տնտեսապես և տեխնիկապես առաջավոր կապիտալիստական  
յերկրներից։

Համաձայն հնգամյակի այն ոլլանին, վորը Խորհրդային իշխա-  
նությունը հաստատել եր սկզբում, Խորհրդային Միությունը մի-  
միայն հնգամյակի վերջում պիտի գերազանցեր կապիտալիստա-  
կան յերկրների մի մասից մի քանի ճյուղերում, այն եւ ելեք-  
տրուեներգիայում 10-րդ տեղից պիտի անցներ 4-րդ տեղը, քարա-  
ծի և պողպատի արտադրության մեջ՝ 5-րդից պիտի անցներ  
4-րդ տեղը և այլն։ Ուրիշ խոսքով, Խորհրդային Միությունը  
հնգամյակի վերջին պիտի հասներ ֆրանսիային քարածի ար-  
տադրության, յերկաթուղային փոխադրանքի և ելեքտրուեներ-  
գիայի արտադրության մեջ, Անգլիային պիտի հասներ չուգունի  
հալիցման, պողպատի արտադրության և ելեքտրուեներգիայի գոր-  
ծում։ Բուրժուական և սոցիալ-ֆաշիստական տնտեսագետները,  
ինչպիս նաև աջ ոպորտունիստները Համկոմկուսի շարքերում այդ  
պլանները համարում ենին ֆանտաստիկական, անիրազործելի,  
մեր ուժերից վեր, իսկ գործնականում մենք ստիպված յեղանքը  
վերաքննելու այդ պլանները և ավելի ընդարձակելու։ Հետևանքն  
այն յեղավ՝ վոր քարածի արտադրության ծրագիրը մենք բար-  
ձրացրինք 75 միլիոն տոննից 130 միլիոնի, նավթինը՝ 21,7 մի-  
լիոնից մինչև 46 միլիոն, չուգունինը՝ 10 միլիոնից մինչև 17 մի-  
լիոն տոնն, մեքենագործության արտադրությունը՝ 2,1 միլիարդ  
ռուբլուց բարձրացրինք մինչև 6 միլիարդ ռուբլու և այլն։ Բա-  
վական ե, յեթե ասենք, վոր Խորհրդային Միության արդյունա-  
բերության արտադրությունը՝ 1931 թվին պիտի ընդարձակվի  
45<sup>0</sup>-ով, իսկ ծանր արդյունաբերությունը՝ մինչև իսկ 58,4%-ով։  
Դա նշանակում է, վոր 1931 թվի վերջում արդյունաբերության  
պրոդուկցիան յեռապատճենված համեմատությամբ, իսկ արդյունաբերական հնդամեյա պլանը կատար-  
վելու յե 79<sup>0</sup>-ով և մինչև իսկ 98%-ով ծանր արդյունաբերու-  
թյան մեջ։ Խորհրդային Միությունը 1931 թվին ընդհանուր առ-  
մամբ հասնելու յի Անգլիային և ֆրանսիային՝ կարևորագույն  
ճյուղերի մեջ։

1932 թվին Խորհրդային Միությունը իր յետն և թողնելու  
բոլոր բուրժուական յերկրները, բայց Միացյալ Նահանգներից,



այսինքն՝ անցնելու յե յերկրորդ տեղը յերկրագնդի վրա ինչ վերաբերում և Միացյալ Նահանգներին, Խորհրդային Միաթյունը նրանց առաջը կկտրի յերկրորդ հնգամյակի ընթացքում:

## ԱՎԱՐՏՈՒՄ ԵՆՔ ԱՌՅԱԼԻՍՏԱԿԱՆ ԵԿԱՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Կալվածատերներին և հականեղափոխական բուրժուազիային վոչնչացնելուց հետո, Խորհրդային Հանրապետության մեջ մասցել են յերկու հիմնական դասակարգեր, պրոլետարիատը և գյուղացիությունը՝ Պրոլետարիատի դիկտատուրան, վոր բանվորները նվաճել են 1918 թվի հոկտեմբեր—նոյեմբեր ամիսներին, պետք ե հաստատվեր և իսկապես հաստատվեց բանվորների և գյուղացիների միությամբ:

«Առաջին անգամ պատմության մեջ գոյություն ունի մի կառավարություն, — գրել ե Լենինը, — վորտեղ միայն յերկու դասակարգ կա՝ միմիջն պրոլետարիատը և զյուղացիությունը»: Պրոլետարիատը, վորը անցողական շրջանում իրազործում ե դիկտատուրան, հանդիսանում ե սոցիալիստական շինարարության բնական զեկավարը և աշխատավոր մասսաների առաջնորդը: Պրոլետարիատի վերջնական նպատակն ե ստեղծել մի այնպիսի հասարակություն, վորտեղ չպետք ե լինեն դասակարգեր: «Սոցիալիզմի խնդիրը կայանում է դասակարգերը վոչնչացնելու մեջ, — ասել ե Լենինը»:

Բանվոր դասակարգը, վյուղացիության հետ, դաշնակցած, իուղոր հողատերներին և կապիտուլիստներին համեմատաբար հեշտությամբ կործանեց: Նեպից հետո դասակարգային պայքարը, ձեափոխած, դարձել ե ավելի կատաղի: Տնտեսական նոր քաղաքականությունը ստեղծված ե յեղել նրա համար, վոր սոցիալիզմը հաղթե կապիտալիզմին, վոր կապիտալիստական տարրերը ջախջախիվեն: Այդ քաղաքականությունը իրեն միանգամյան արդարացրեց: Մենք տեսնում ենք, թե ինչպես հետզհետե սահմանափակում և վանդում են կապիտալիստական տարրերը, իսկ վերջերս բոլորովին վոչնչացվում ե կուլտակությունը վորպես դասակարգ՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Մասնավոր կապիտալը, վորը նեպի սկզբնական շրջանում և հնգամյակի սկզբում ուներ վորոշ կուտակումներ և արդյունաբեթյան ու մասնավոր առևտուրի մեջ բռնել եր աշքի ընկնող դիրքեր, սկսեց վաճակել ամեն տեղից և ամենից առաջ արդյունաբերության սոցիալիստական սեկտորի կողմից, սկսեց թուլանալ և արդյունաբերության միջից արգեն բոլորի վիճակին անհայտացել ե:

Խորհրդային Հանրապետության սահմաններում մասնավոր կապիտալը ունեցել ե զարգացման յերեք շրջան, առաջին շրջանը մուտավորապես ընդգրկում ե մինչև 1924 թվականը, յերբ ձեռկերպվում եր մասնավոր կապիտալը. դա նրա կուտակման շրջանն եր, Յերկրորդ շրջանը՝ 1924 թվից մինչև 1927 թվականը՝ մասնավոր կապիտալը ժողովրդական տնտեսության վերականգման պայմաններում մեծացնում եր միջոցները և հասցնում 1927 թվին մոտ մի միլիարդ ռուբլ (վորից 800 միլիոն սուբլին գտնվում են առևտորի մեջ), 1927 թվին մասնավոր կապիտալը մտնում ե իր յերրորդ և վերջին շրջանը. այդ վայրկյանից նա սկսում ե կորցնել իր գիրքերը մեկը մ ուսի յետից: Յեթե 1922—1923 թվականներին առևտրական ցանցի  $\frac{3}{4}$  մասնավոր կապիտալի ձեռքին եր, յեթե այդ շրջարում կանոնավորապես չամրացած պետական առևտրական և կոռպերատիվ ապարատները չնչին դեր եյին խաղում ապրանքը արտադրողից սպառողին հասցնելու գործում, — ապա այնուհետև մասնավոր առևտորի նշանակությունը սկսում ե տարեցարի ընկնել, իսկ առ 1931 թվականը մասնավոր առևտրականը վանված եր վոչ միայն թոմառային (ՕՊՏՈՎԱՅ), այլ և հասավաճառ առևտրից: Բանվոր սպառողը ազատվել եր մասնավոր առևտրականին բազմաթիվն հարկեր տալու պահանջներից:

Սոցիալիստական շինարարությունը պայմանավորող սոցիալական տեղաշարժները առաջ բերին հեղաշրջում զյուղացիական մասնավորի մեջ և հրեցին նրանց դեպի կոլխոզներն ու կոռպերացիայի արտադրական ձևերը: Պրոլետարիատը պատճովել ե այդ շարժման պատշաճ զեկավարությունը, զյուղացիությանը նոր ետապում առաջնորդելու գործում (դասակարգային պայքարը նոր պայմաններում առաջնորդելու գործում):

Տրոցկիստական 1925, 1926 և 1927 թվականներին պահանջում եյին, վոր կուտակցությունն անհապաղ գրոնե կուլակության դեմ: Այն ժամանակական պայմաններում դա ավանդություրա (արկածա-

խնդրություն) կլիներ: «Կարմաղ եյինք մենք, — հարցնում եր ընկ. Ստալինը իր ճառում 1929 թվի դեկտեմբերի 27-ին — հինգ կամ յերեք տարի սրանից առաջ սկսել այդ արշավը՝ հոյս ունենալով, վոր հաջողություն կունենանք: Վոչ, չեյինք կարող»: Ընկ. Ստալինը ցույց եր տալիս, վոր 1927 թվին կուլակները արտադրում եյին ավելի քան 9,5 միլ. տոնն հացահատիկ իսկ կոլխոզները և սովխոզները այն ժամանակ տալիս եյին միայն 1,5 տոնն հացահատիկ:

1926—27 թվականներին գյուղում կար 1,404 հազար տնտեսություն, վորոնք վարձում եյին բանվորական ուժ յերկար ժամանակով և 5,212 հազար չքավոր տնտեսություն: Դյուղացիության՝ թվով պակաս կուլակային մասի ձեռքումն եյին կենտրոնացած ինքնառարի, անասունների և հացի պաշարի նշանավոր մասը:

1929 թվի վերջում դըռ թյունը խիստ փոխվում է: Սովխոզները և կոլխոզները այդ տարին արտադրել են 6,5 միլ. տոննից վոչ պակաս և տվել են 2 միլ. տոնն ապրանքային հաց, այսինքն այսնքան, վորքան առաջ տալիս եյին կուլակները: «Այժմ, ինչպես տեսնում եք, մենք միջոցներ ունենք կուլակին փոխարինելու, այսինքն՝ փոխարինելու կուլակային արտադրությունը կոլխոզների և սովխոզների արտադրությամբ» (Ստալին):

1926 թվին կուլակներին բաժին եր ընկում հացի ընդհանուր բերքահավաքի 13,2%<sup>0</sup>-ը, իսկ 1929 թվին այդ թիվը իջնում է 6,6%<sup>0</sup>-ի: Այդ նույն ժամանակ սովխոզների և կոլխոզների բերքահավաքը 1926 թվին 1,7%<sup>0</sup>-ից բարձրանում է 1929 թ. 5,1%-ի, 1930 և 1931 թվականների հաջողությունները ավելի ապշեցուցիչ են: 1930 թվին յեղել է 219 միլ. ցենտներ հաց, մինչդեռ 1913 թ. ապրանքային հաց Ռուսաստանը ունեցել է 217 միլ. ցենտներ: 219 միլ. ցենտներից 31 միլ. ցենտներ տվել են սովխոզները, իսկ 1913 թվի 217 միլ. ցենտներ ապրանքային հացի 155 միլ. ցենտները տվել են կալվածատերերը և կուլակները, կուլակների տված հացը 1930 թվին՝ արդեն շատ չնշին դեր է ունեցել: Համամրութենական խորհրդների VI-րդ համագումարը հրահանդել և հասցնել սովխոզների հացահատիկների ցանքսի հրապարակը 1933 թ. 9,5 միլ. հեկտարի և առանձին ապրանքային պրոդուկցիայի արտադրությունը վոչ պակաս քան 66,5 միլ. ցենտներով, այսինքն՝

չորս անգամ ավելի, քան ծրագրված եր 1928 թվին կամ հնգամյակի վերջին տարվա համար:

Ինչ վերաբերում է կոլխոզներին, պետք է ասել, վոր 1930 թվականի գարնանը նրանք ցանել են 32,8 միլ. հեկտար, իսկ 20 միլիոնն անհատական անտեսությունները ցանել են նույն ժամանակամիջոցում 52,8 միլ. հեկտար: ԽՍՀ Միության Հողժողկոմի եյին ավելի քան 9,5 միլ. տոնն հացահատիկ իսկ կոլխոզները և պաշտոնական տեղեկությունների համաձայն, առ 1 հուլիսի 1931 թ. կոլխոզներում են գտնվում արդեն բոլոր տնտեսությունների կեմբից ավելին — 55,2%-ը, ուրիշ խոսքով՝ հանրայնացրած սեկտորը գերազանցել է չհանրայնացված սեկտորից վոչ միայն քաղաքում, այլ և գյուղում: Կոլխոզնիկը զարձել է կենտրոնական ֆիզուրան գյուղում: Հնդամյակի վերջում համատարած կոլեկտիվացումը կավարտվի Խորհրդային Միության մեջ լիովին և հենց դրանով վերջ կորվի կուլակությանը, վորպես դասակարգի:

Զարմանալի չե, վոր այդ պայմաններում, յերբ Խորհրդային Միությունը անցել է սոցիալիզմի շրջանը հարկ և լինում նոր ձեռվ դնել շնորհի, գասակարգերի, կոլխոզների, անցողիկ շրջանի և կոնոմիկայի հարցերը (Ստալին), հարկ է լինում նոր ձեռվ դնելու Խորհրդային Միության անտեսական ձեերի հարցը:

Առաջին անգամ կենին է գրել հասարակական-անտեսական այն հինգ կարգերի մասին, վորոնք միասին կազմում են Ռուսաստանի եկոնոմիզմն: Նա այդ արել է Հոկտեմբերի հեղափոխությունից հետո, դեռ ևս 1918 թվին, յերբ վերլուծում եր այդ եկոնոմիզմի կան: Ի՞ր՝ «Մեր որերի զլիավոր խնդիրը» գրքույկում կենինը ասել է, վոր կապիտալիզմից զեպի սոցիալիստ ընթացող անցողական շրջանում չկա անտեսական մի ամբողջական կարգ, և վոր այդ շրջանում եկոնոմիզմի մեջ խծկվում են «տարրեր, մասնիկներ, պատառներ կապիտալիզմից և սոցիալիզմից»:

Վորոնք են այդ տարրերը:

Կենինը տալիս է այդ հարցի պարզորոշ պատասխանը:

«1. Նահապետական, այսինքն զգալի չափով նատուրալ կյուղացիական տնտեսություն:

2. Մանը տպարանքային արտադրություն (դրա մեջ մանում և մեծամասնությունը այն գյուղացիների, վորոնք վաճառում են հացը):

3. Մասնավոր-տնտեսական կապիտալիզմ:

#### 4. Պետական կապիտալիզմ:

##### 5. Սոցիալիզմ:

Լենինը պետական կապիտալիզմի մեջն և հաշվում մանսավորակերը և կոռուպերացիոն ձեռնարկները՝ դրան զարգացման վորոշ շրջանում (ստորև մենք դեռ կխոսենք կոռուպերացիայի գերի մասին): Պետական ձեռնարկները, վորոնք ազգայնացված են պրոլետարական հեղափոխության հաղթանակով լենինը ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր դասում և սոցիալիստական տարրի շարքում:

Նույն գրքույկում, վոր նվիրված և Ռուսաստանի եկոնոմիկայի վերլուծմանը, լենինը հարց ե դնում թե վոր տարրերն են գերակշռող հանդիսանում Ռուսաստանում և տալիս ե պատասխանը. «Պարզ ե, վոր մանր-դյուզացիական յերկրում գերակշռում ե և պիտի գերազու մանր-բուրժուական տարրերը. յերկրագործների մեծամասնությունը և այն ել ահազին մեծամասնությունը, մանր ապրանքարտադրողներ են»:

Այսպես եր դրությունը և 1918 թվին, և 1921 թվին՝ նեպին անցնելու ժամանակ, յերբ լենինը ամբողջովին վերհանեց իր վերլուծումը 1918 թվի եկոնոմիկայի մասին իր նշանավոր գրքույկում, վորը կրում եր «Պարենտուրքի մասին» վիրսագիրը և լույս տեսավ 1921 թվի ապրիլին: Այդ գրքույկի մեջ լենինը ցույց է տավել, վոր յերկրում պայքար ե կատարվում զանազան կարգերի մեջ: Ի՞նչպես, ի՞նչ ձեռով: «Ո՞վ և ո՞ւմ դեմ ե պայքարում, — հարցնում ե լենինը, — յեթե խոսենք տնտեսական կատեգորիաների տերմիններով, ի՞նչպես ե՝ «պետական կապիտալիզմ» — չորրորդ և հինգերորդ աստիճանների մեջ այն կարգով, վոր յես թվեցիքիչ առաջ: Իհարկե, վոչ: Վոչ թե պետական կապիտալիզմն պայքարում այստեղ սոցիալիզմի դեմ, այլ մանր բուրժուազիան, պլյուս մասնավոր-տնտեսական կապիտալիզմն ե, վոր պայքարում են միասին, համերաշխ՝ և պետական կապիտալիզմի դեմ, և սոցիալիզմի դեմ»:

Հեղափոխության այս, ինչպես նաև հետագա շրջաններում լենինի առաջ ծառացած եր հիմնական հարցը, «ի՞նչպես հեշտացնել նահապետական, մանր արտադրությունից սոցիալիզմին անցնելու գործը»: Բայց, իհարկե, զանազան հտապներում այդ

հարցը վճռելիս առաջ ելին բերվում զանազան միջնորդող ողակները: Ի՞նչպիսիք:

Ամեն տեսակի ոպորտունիստները չելին հասկանում, վոր մասնավոր առևտուրի կենդանանալը և սկզբնական շրջանում մեր յետ նահանջելը միայն միջոցներ ելին ուժերի հետագա համար կամ իմք մասն և կապիտալիստական տարրերի վրա հարձակություն գործելու հոմար: Ոպորտունիստները չելին հասկանում, վոր զարգացման հետագա շրջանում մասնավոր առևտուրը պետք ե խիստ թուլանա և կապիտալիզմը ուժեղ կերպով պիտի կրծատվի, և վոր հենց այդ նպատակով ել պրոլետարիատը թույլ եր տվել նեպը և այդ նեպի հիմունքով նա կարողացավ ձեռք բերել հանրայնացված սեկտորի վճռական ու անպայման գերակշռությունը չհանրայնացված սեկտորի հանդեպ:

Հանձնարարելով անցնել նոր տնտեսական քաղաքականությանը, լենինը ամեն կերպ շեշտում եր, վոր միայն գրա հիմունքով «կարելի կլինի ստեղծել խոշոր արդյունաբերություն»:

Լենինը, իհարկե, շատ լավ հասկանում եր, վոր բանվոր դասակարգին միշտ ել հարկավոր չեն լինելու փողը և առետուրը: «Յերբ մենք կհաղթենք համաշխարհային մասշտաբով, — գրել ե լենինը, — այն ժամանակ, ինձ թվում ե, մենք վոսկուց արտաքսոցներ կշինենք մի քանի ամենամեծ քաղաքների փողոցներում»: Ստալինը դեռ ևս 1927 թվին արտասահմանյան բանվորական պատգամավորությունների հետ խոսելիս ասել ե. «Հասել ե ժամանակը, յերբ արդեն փողի կարիք չի լինելու»: Շեշտելով այդ հեռանկարը, Ստալինը, սակայն, անմիջապես ընդգծել ե, վոր «դեռ ևս մենք հեռու յենք այդ որից»:

Տվյալ շրջանում նեպը, առևտուրը և փողը դեռ ևս հարկավոր են բանվոր դասակարգին, թեև կազմակերպչական շրջանում այդ հարցերը դրվում են այլ կերպ, քան մինչկազմակերպչական շրջանում:

Խորհրդային առևտուրը 1921 թվականին, յերբ բանվոր դասակարգը ունենալով իր ձեռքում իշխող բարձունքները (խոշոր արդյունաբերությունը, արան պորտը, բանկերը և այլն), դեռ ևս տեր չեր վոչ հատավաճախին և վոչ լիակատար չափով թոմարային առևտուրին, — զանագանվում եր 1925—26 թ.թ. խորհրդային առևտուրից, յերբ հիմնականում ավարտված եր վերակառուցման շրջանը:

Այն ՀՔՁանների առևտուրը ոժեղ կերպով տարբերվում է այժմյան խորհրդային առևտուրից, յերբ Խորհրդային Միության բանվոր դասակարգը գրոհում և բոլոր ճակատներում և փոշչաց նում և կուլակներին վորակես դասակարգի՝ համատարած կոլեկտիվացման հիմունքով:

Կասկած չկա, վոր կապիտալիստական յերկրների պայմանների հետ համեմատած, արմատականակես փոխվել են խորհրդային փողի ինչպես նաև խորհրդային առևտուրի բնությունը ֆունկցիաները, վորովհետեւ փոխվել են հասարակական-անտեսական կարգերի փոխհարաբերությունները:

Բուրժուական վաճառականներից Խորհրդային Միության բանվորները տարբերվում են նրանով, վոր յերբեք նպատակ չունեն անպատճառ շահ ստանալու: Բանվոր դասակարգը չի ճգտեմծ շահեր ստանալու: Ինչ գնով ուզում ե լինի, թեկուզ գյուղացիության հիմնական մասսաների տնտեսական քայլայման գնով Կուսակցությունը ջախջախիչ հարված ավեց արոցիկստաներին, վորոնք վորձում ենին տանել նրան միջակի հետ ամեն հարաբերություն կտրելու կործանարար ճանապարհը: Դրա համար ե սովետական տնտեսական հաշվից միջտ ել ուժեղ կերպով զանազանվել և առևտրականի «վաճառականական հաշվից և տրոցիստների ավանդության տնտեսական հաշվից»: Կուսակցության XIII-րդ համագումարը նշել ե, վոր «թեթև և ծանր արդյունաբերության փոխհարաբերությունները յերբեք չեն կարող վճռվել միմիայն շուկայի ճանապարհով»: Կարիք չկա շեշտելու, վոր բանվոր դասակարգը նեպի վոչ մի շրջանում չի յերկրագրել շուկային, վորպես կուռքի: Ըստհակառակն, բանվոր դասակարգը յենթարկել ե շուկան խոշոր արդյունություն վերականգնման նպատակներին: Պետք եր ճգտել վճռական եկոնոմիկայի ի հաշվի ժախսերի իջնցման և ինքնարժեքի ոլակաւեցման, այսինքն՝ ուռւրլու հաշվարկության՝ վորպես կառավարելու, հաշվետեսության և ստուգության մեթոդի՝ նոր տնտեսականքաղաքականության պայմաններում: Առանց սուբլու հաշվարկության յոլա զնալու կանխաժամ փորձերը բացասական արդյունք են ավել: Բայց 1931 թվականի տնտեսական հաշվից այն չե, ինչ վոր 1921 թվականին կր Պետականություն և կոռպերացիան դուրս են քեզ մասնավոր առևտուրականին համարյա ամբողջությամբ: Հենց միայն դա խիստ տար-

բերում է ալյուալ ժամանակի տնտեսական հաշվից նեպի առաջին շրջանի հաշվից, յերբ մասնավոր առևտրականը առևտուրի մեջ նշանավոր գեր եր խաղում: Պահնի գերը, վորպես շշուկայի ուժերի ազատ խաղից տարերայնությունը հաղթահարող գենքի, ուժեղացեցի ն: Տնտեսական հաշվից կառուցվում ե պլանով: Չնայած վոր թույլ են տրված շուկան և առևտուրը, բանվոր դասակարգը վոչ մի ժամանակի չի մոռանում պլանի մասին, նրա սկզբունքի մասին տնտեսական հաշվի մեջ: Այդ մասին վկայում և հնգամյակի կաղմակերպչական ահազին գերը: Ավելին կասենք, յեթե առաջին շրջանում հնարավոր եր միմիայն դրամական շրջանառության կանոնավորությունը, այժմ դրամական շրջանառությունները սոցիալական սեկտորում գարձել են գերակշռող: Ռուբլու հաշվարկությունը այդ պատճառով դարձել ե ավելի քան առաջ հաշվետեսության և ստուգման զենքը: Այդ փոփոխությունը անդրադարձել ե նաև ապրանքափոխականության վրա: Ապրանքների փոխանակությունը մնացել ե, բայց դա այն չե, ինչ վոր առաջ եր: Ապրանքային-դրամական հարաբերությունները մնացել են, վորովհետև գոյություն ունի առ և ծախս փողի ոգնությամբ, մնում են ավելի քան 10 միլիոն գյուղացիական անհատական տնտեսություններ և կոլխոզներումն ել հանրայնացված են արտադրության միմիայն հիմնական միջոցները և կոլխոզնիկը շատ անգամ շուկա յե դուրս գալիս վորպես առևտրական: Նեպը մնացել ե, բայց նեպի ստագիան փոխվել ե:

Ստալինի այն բնորոշումը նեպի, վորպես քաղաքականության, վորը... Շնկատի ունի, վոր սոցիալիստական տարբերը կհաղթեն կապիտալիստականին, կվոչնչանան դասակարգերը, կվառուցվի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը, + ամբողջովին բղխում և կենինի ցուցմունքներից նոր տնտեսական քաղաքականության եյության և խնդիրների մասին:

Նեպին անցնելը պայմանավորված եր նրանով, վոր անմիջական չըրնը կապիտալի դեմ Շնկատական կոմունիզմի՝ ձեռվ մի շարք պատճառներով չկարողացավ հասցնել մեզ նոր կենոնմիկայի հիմքը կառուցանելուն: «Եղածալ հարաբերությունների հասնել մենք այս պահին չենք կարող» — ասում եր Լինինը: Նեպը բանվոր դասակարգի ձեռքին պիտի հանդիսանար վորպես կարող միջոց՝ նշանակված նպատակին համելու համար:

«ՏՆՄԵՍԱՊԵՍ և քաղաքականապես, — ընդգծում ե Լենինը, — նեպը միանգամայն ապահովում ե մեզ համար սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի լիովին կառուցումը»:

Լենինի որոք, ինչպես և մատնանշել ե ինքը, նոր եկոնոմիկայի հիմքը դեռ ստեղծված չեր: Աշխատավոր ժամանելի հանձարեղ ղեկավարի մահվան ըուղիին մենք գտնվում ենքինք միայն վերականգման շրջանի շեմքում: Սովետական արդյունաբերության արտադրությունը այն ժամանակ դեռևս շատ հեռու յեր նախապատերազմականից: 1923 թվին արտադրությունը չեր բարձրանում նախապատերազմական արտադրության 25% ից: Նույն իսկ չուգունի արտադրությունը 1924 թվականի ամառը կազմում եր նախապատերազմական ժամանակի միայն 14% ը:

Նոր տնտեսական քաղաքականության առաջին յերեք տարիները Լենինի որոք տվել են առաջին հաջող արդյունքները, բայց դրանք դեռևս բավական չենք, վոր մենք անցնեցինք սոցիալստական գրոհի արագացած թափերին:

Բայց Լենինը նախատեսել եր սոցիալիստական շինարարության տեմպերի հետագա արագացման հնարավորությունը, վորը հիմնված պիտի լինի պրոլետարական դասակարգային — հաստատուն ճիշտ քաղաքականության վրա:

Յեկիսապես, կուսակցության ղեկավարությամբ, լենինիզմի դրոշակի տակ բանվոր դասակարգը մեծագույն հեղաշրջում առաջ բերեց գյուղում — միջակը անցավ կոլխոզի կողմը: Հետեւանքը յեղակ այն, վոր զբությունը արմատականապես փոխվեց, մանրեռությունական տարրերը այլ ևս չի գերազանցում մեր յերկրում:

Պատմական հսկայական նշանակություն ունեցող հաջողությունները գյուղական տնտեսության մեջ ապահովեցին մեզ համար այն, վոր կուլակներին սահմանափակելու և վանելու քարաքականությունից մենք անցանք նրանց վորպես դասակարգի՝ համատարած կոլեկտիվացման հիմունքով՝ վոչնչացնելու քաղաքականությունը, «Հենց դրանով անազին չափով ամրանում ե բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ: Ընդհանական գործը՝ առաջ և Խորհրդների համագումարի վորոշութիւններում, — այն իշխանության, վորի համար այսուհետեւ գյուղում հիմնական և գլխավոր նեցուկը

հանդիսանում ե կոլխոզային գյուղացիությունը»: Լենինի յերկու առաջնորդող գաղափարները հիմք են ծառայում խորհուրդների համագումարի վորոշման մեջ բանվորա-գյուղացիական հիմքը ընդգրածակելու գործում: առաջին գաղափարը կայանում ե նրանում, վոր կոլխոզային շինարարությունը հանդիսանում ե աշխատավորների գասակարգային պայքարի մի ձևը սոցիալիզմի համար՝ պրոլետարիատի ղեկավարությամբ: 1931 թվի գարնանը մենք տեսնում ենք մի նոր վճռական շարժում պյուղում: հանրայնացված սեկտորը ընդգրկում ե բոլոր տնտեսությունների կեսից ավելին, այսինքն բացարձակ մեծամասնությունը: 200 հազար կոլխոզները, վորոնք միացնում են 13 միլիոն գյուղացիական տնտեսություններ, սկզբում իրարից բաժան-բաժան, 4000 սովորողների հետ միասին ցանել են գարնանացանի ավելի քան 70% ը: Կենտկոմի հունիսի պլենումը (1931 թ.) այդ առթիվ մատնանիշ ե արել գյուղում գյուղություն ունեցող նոր հարաբերությունները: Առաջ միջակ-մենատնտեսավարը գյուղի կենտրոնական ֆիգուրան եր, իսկ այժմ «չքաղաք և միջակ մենատնտեսավարի ղերը գյուղատնտեսական արտադրության մեջ յերկրորդական և դարձել» (Համկոմկուսի Կենտկոմի հունիսի պլենումի վորոշումը):

Հարյուր հազարավոր հանրայնացված գյուղացիական տնտեսություններ ձեակերպվում են և հաղթում դասակարգային համար պայքարի մեջ և այդ հիմքով յերկրում արմատախիլ են դասնում կապիտալիզմը և կուլակները, կոլխոզների այդ «հիմնական թշնամիները»: Կոլեկտիվացման լիակատար ավարտման մենք կհասնենք հնգամյակի վերջում, իսկ ավելի վաղ, 1931 թվի վերջում կավարտվի սոցիալիստական եկենոմիկայի հիմքը:

## ԱԱԱՆԵԼ ՅԵՎ ԱՌԱՋ ԱՆՑՆԵԼ

Հնգամյա պլանը հակառակ մեր դասակարգային թշնամիների և նրանց ձայնակցողների հերյուրանքներին, դուրս յեկավ, վոր «յերազող» բոյլշեկների յերազների գործ չե, այլ սոցիալիստական գրոհի համար ճակատներում ծավալված իսկական պատմա-

կան հեղաշրջման լծակ և սոցիալիստական շինարարության հզոր գործիք: Հնդամյա պլանը դարձավ, ինչպես այդ շեշտվեց Համամիութենական վերջին համագումարում, «բանվոր դասակարգի զրոյշ»: Վորոնք են այդ հնդամյակի իրազործման արդյունքները: Հնդամյա ծրագրի առաջադրությունները առաջին յերկու տարվա համար ժողովրդական յեկամտի, պետական բյուջեի, հանրայնացված սեկտորը մտցրած դրամագլուխների, արդյունաբերության ընդհանուր արտադրության, ցանքսային հրապարակների, հացահատիկների ապրանքային արտադրության, յերկաթուղիների ապրանքային շրջանառության նկատմամբ վոչ միայն կատարված են, այլ և գերակատարված: Մենք ունենք պլանի մասնակոր թերակատարում մի քանի ճյուղերում, բայց ամբողջ պլանի վերաբերմամբ մենք առաջ ենք գնում առաջադրությունների նշանավոր գերակատարությամբ, առաջադրությունների, վորոնք հաստատված են Համամիութենական Խորհուրդների անցյալ համագումարի կողմից: Մենք յերկու տարվա մեջ համարյա կրկնապատկել ենք ծանր արդյունաբերության արտադրությունը, մասնավոր արագորեն աճել և մեր մեքենագործական արդյունաբերության պրոդուկցիան (ավելի քան յերկու անդամ) և գյուղատնտեսական մեքենագործության արտադրությունը (2 անդամ): Մենք կատարել ենք ամբողջովին եկարուներդիայի մշակման պլանը և այս տարի համարյա կրկնապատկել մասնական կամաց արդյունաբերության ուժում:

Արդյունաբերական պրոդուկցիայի աճման բոյլերիկական բարձր տեմպերը ապահովում են մեր յերկրի ընթացքը սոցիալիստական ինդուստրացման ձանապարհությունը: Արդյունաբերության արտադրությունն արդեն անցյալ տարի կազմում եր ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրության յերկու յերրորդը: Պիտի ընդգծել, վոր հնդամյակի առաջին յերկու տարիների տեմպը ունկորդային չեր ամենեին: Մենք պետք ենք արագացնենք մեր արդյունաբերության տեսակարար կշիռը ավելի և: Ցեղ մենք գործի յենք գցում հետզհետե ինդուստրիայի նորանոր հսկաներ: 1931 թվի վերջում ծուխը յերկինք կրաքացնեն 518 խոշորագույն ձեռնարկությունների ծխայելույղները: Դրանց նշանակության մասին կարելի յետատել հետեւյալ ավալներից: անցած չորս տարիների ընթացքում մենք կառուցել ենք 323 նոր

ձեռնարկություններ: «518-ի ընդհանուր արտադրությունը յերկու անգամ գերազանցում է բոլոր նոր ձեռնարկությունների արտադրությունից, վորոնք գործի յեն ցցվել նախընթաց չորս տարիների ընթացքում: Այդ փոքրիկ թվերը պերճախոս ապացույցներ են սոցիալիստական շինարարության խսկական բոյլերիկական տեմպերի:


Մի շաբաթ ճյուղերում մենք հնդամյակը կատարում ենք վոչ թե 4, այլ 3 և 2½ տարում:

«Մեր արդյունաբերության զարգացման մեջ նորը կայանում են նրանում, վոր մենք այժմ հնարավորություն ունենք զարգացնելու արագ տեմպերով թե ծանր և թե թեթև ինդուստրիան» (Ստալին): Այդ պատմական հեղաշրջումը դեպի ուռացող բոյլերիկական տեմպերը ամբողջ արդյունաբերության նկատմամբ, ներառայալ նաև թե եթե արդյունաբերությունը, նախապատրաստված են յեղել մեր ծանր ինդուստրիայի հսկայական հաջողություններով, և ամենից առաջ սկս մետաղուրդիայի հաջողություններով:

Հենց այդ հիմքի վրա, այն եւ ծանր արդյունաբերության հիմքի վրա, վորպես սոցիալիստական ինդուստրացման սկզբունքի, — ամուռ կերպով աճում են նաև թեթև արդյունաբերությունը մասնավորապես ընդարձակվում երդեղեն և բամբակեղեն ձեռնարկությունների արտադրությունը, ընդարձակվում են գործող Փաքրիկները և պատրաստվում են գործելու նոր հսկաներ:

Տեխնիկապես և տնտեսապես առաջավոր յերկրներին հասնելու և առաջ անցնելու անհրաժեշտությունը ստիպողաբար թելադրում են մեզ անցկացնել սոցիալիստական կառուցման բոյլերի կան տեմպերը ճյուղերում: Այդ կառուցման բնորոշ առանձնահատկությունը ներկա շրջանում տեմպերի արագությունն եւ սոցիալիստական ինդուստրիայի, վորը կոլեկտիվացման հետ միասին հանդիսանում է կարենրագույն ողակը սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտման գործում:

«Կամ կորչել և կամ հասնել առաջավոր յերկրներին ու նրանցից առաջ անցել նաև անտեսապես», — զրել եւ կենինը հոկտեմբերյան հեղափոխության նախորյակին, խորապես քնննելով հեղափոխական զարգացման առաջնորդությունը կուպությունը կենինի



հետ միասին գեռես պրոլետարական հեղափոխությունից առաջ գիտակցել և տմբողջ ակներեւությամբ, վոր անհրաժեշտ ե լիկվիդացիայի յենթարկել յերկրի տեխնիկական և տնտեսական յետամացությունը, անհրաժեշտ ե «հասնել և առաջ անցնել» առաջավոր պետություններից:

Արդյունաբերության մեջ աշխատողների առաջին համամիութենական համագումարում ընկ. Ստալինը ասել ե. «ամենաշատը տասը տարում մենք պիտի կարենք այն տարածությունը, վոր մենք յետ ենք մացել կապիտալիզմի առաջավոր յերկրներից», «Ամենաշատը 10 տարում»:

Մենք մեր նպատակին հասնելու համար արդեն շատ քայլեր յենք արել առաջավոր յերկրների արդյունաբերության մակարդակին հասնելու և նրանցից առաջ անցնելու համար:

Առաջելով վոչ միայն յեկրոպական յերկրներից, այլ և Հյուսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից, մենք կդառն անք առաջին յերկիրը յերկրագնդի վրա պըռոդուկցիայի և տեխնիկայի կողմից, կդառնանք արդյունաբարական մեծագույն յերկիրը:

Մենք կունենանք ինդուստրիայի մեծագույն հսկաները:

Հնդամյակի առաջին տարիների նվաճումներին նայած, մենք առաջ ենք ընթանալու և ամբողջությամբ իրազործելու յենք «հասնել և առաջ անցնել» լոգունքը:

Դրա համար մենք ունենք «իրական» հնարավորություններ, — ասել ե ընկ. Ստալինը անտեսավարների կոնֆերանսում, Պակասում և միայն այդ հնարավորությունը ըստ պատշաճին ոգտագործելու կարողությունը: Իսկ զա կախված է մեղանից: Միամիայն մեզ անից: Ժամանակ ե, վոր սովորենք ողտագործել այդ հնարավորությունները:

Սոցիալիզմի կառուցման արագ աճումը, յերկրի ինդուստրացման և գյուղական տնտեսության հոլեկտիվացման հսկայական տեմպերը դնում են մեր առաջ մեր տրանսպորտի վերակառուցման հարցը իր ամբողջ ծանրությամբ: Ինչու յետ տրանսպորտը դարձել «նեղ տեղ» (արգելք) ժողովրդական տնտեսության համար:

Դա բացառիկում ե նրանով, վոր արդյունաբերությունը և զյուղական տնտեսությունը ապրանքներ և մարդկանց տեղափո-

խելու գործում համառորեն պահանջում են վիթխարի, շարունակ մեծացող տեմպեր, այնպիսի տեմպեր, վորոնց կարող ե տիրել մեր տրանսպորտը ամբողջապես միմիայն այն ժամանակ, յերբ վճռականապես կփոխվի յերկաթողային տնտեսության տեխնիկական բաղան (հիմքը), յերբ կծավալվի ռացիոնալիզացիան:

Ապրանքափոխության և ճամփորդների տեղափոխության հսկայական զարգացումը հնդամյակի առաջին յերկու տարիներում, շոգեմեքենաների կայանների աճը, ապրանքատար վագոնի որեկան յերթի մեծանալը և այլն, — այդ բոլորը ապացույց են մեր տրանսպորտի նշանավոր հաջողությունների:

Տրանսպորտը այս ընթացիկ 1931 թվին իր հնդամյա պլանը կկատարի, այսինքն՝ ժամանակից յերկու տարի առաջ:

Բայց և այնպիս տրանսպորտը դարձել ե ժողովրդական տնտեսության մեջ «նեղ տեղ», սկսել ե յետ մնալ յերկրի ամբողջ սոցիալիստական շինարարությունից: Դա ամբողջ ուժով շեշտել ե կուսակցության հենտկոմի հունիսյան պլենումը:

«Զնայած անպայման հաջողություններին յերկաթողային տրանսպորտի աշխատանքի մեջ, — նշել ե պլենումը, — նրա աճման տեմպերը չեն համապատասխանում յերկրի սոցիալիստական շինարարության ծավալված տեմպերին»:

Մենք ցարիզմից ժառանգություն ենք ստացել չափաղանց չնչին յերկաթողային ցանց: Բավական և ասել, վոր 1913 թվին Ռուսաստանի յերկաթողիների յերկարությունն եր 70.525 կիլոմետր, մինչեւ Ամերիկայի Միացյալ Նահանգներում այդ թիվը հասնում եր 400.000 կիլոմետրի:

Վերջին 15 տարիների ընթացքում յերկաթողիների հիմնական նյութերը զգալիորեն հնացել են, բավարար չափով չեն փոխարինվել յերկաթագծերը և շպաները: Տրանսպորտը յետ եր մնացել տեխնիկական վերազինման կողմից:

Առանձին վասարար տարրերը, վորոնք արանսպորտում մեծ չափով բուն եյին դրել նախորդ տարիներում, փորձել են լիովին կազմալուծել արանսպորտի աշխատանքը և, իհարկե, թողել են իրենց յետքը նրա մեջ:

Դիմակազուրկ յերթը, վոր մտցված եր այն ժամանակ, չունենալով տեխնիկական բաղան, խիստ կերպով վատթարացրեց շոգեկառքերի դրությունը, ընկավ աշխատանքի կարգապահությունը

և իջավ նրա արտադրողականությունը 1930 թվի յերկրորդ կեսին ու 1931 թվի առաջին քառամյակին:

Յերկաթուղային տնտեսության առողջացումը սկսվեց գիմազրկության լիկվիդցիայից և պատասխանառու յերթը մտցնելուց հետո: Վերջին միջոցը, սակայն, բավական չեւ արանսպորտը նոր ճանապարհի վրա կանգնեցնելու համար:

Սոցիալիստական տրանսպորտը պետք է վճռականապես վերակառուցվի, վերագինվի:

Ի՞նչպես անել այդ, վճռական պետք է կուսակցության կենտրոմի հունիսյան պլենումը պարզորոշ պատասխան և տալիս դրան: Տրանսպորտի վերակառուցման առաջնորդող ողակը պիտի լինի յերկաթուղիների եկեղեցիկացիան, շոգեկառքների աստիճանական փոխարինումը եկեղեցուկառքերով, վորոնք կարող են անցնել ամենաթեք վերելքները:

Կապիտալիստական յերկրներում, վորտեղ յերկաթուղիները համարյա ամենուրեք պատկանում են մասնավոր մարդկանց և ընկերություններին, արանսպորտի եկեղեցիկացումը արեսատական կերպով յեն են պահում: Կապիտալիստները վախենում են արմատականապես նորոգել յերկաթուղիները: Յեզ մենք տեսնում ենք, վոր Հյուսիսյան Ամերիկայի Միացյալ Նահանգներում եկեղեցիկացիայի յի յենթարկված յերկաթուղիների միայն մի տոկոսը, Անգլիայում 2 տոկոսը, Ֆրանսիայում 2,8 տոկոսը:

Մենք անհամեմատ ավելի ձեռընտու դրության մեջ ենք գըտնվում, քան բուրժուական յերկրները: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեզ այլ ևս չեն կաշկանդում մասնավոր կապիտալի կապանքները: Մենք համարձակ կարող ենք ոգնության կանչել նորագույն տեխնիկան սոցիալիստական շինարարության համար: Մենք ընդարձակորեն կարող ենք կիրառել եկեղեցիկացիան տրանսպորտի մեջ:

Կենտրոմի պլենումը նշել ե, վոր մեզ հարկավոր են ուժեղ շոգեկառքեր, 50—60 տոննա պարունակող վագոններ, զորեղ շարժական կազմ: Բացի այդ, մենք պետք ե վերակառուցենք ճանապարհները, ուժեղացնենք կապը, բարելավենք ջրի մատակարարումը, մեքենայացնենք բեռնաբարձման և բեռնաթափության աշխատանքները:

Բայց դա քիչ ե: Մենք պետք ե մոտագա տարիներում շինենք նորանոր յերկաթուղիներ, ուժեղացնենք յերկաթուղային շինարարությունը: Արտասահմանում յերկաթուղային ճանապարհների կառուցումը պատերազմից հետո համարյա դադարել ե: Որինակ, Ամերիկան 1916 թվից հետո վոչ մի ճանապարհ չի շինել: Անգլիան մինչև այժմ չի վերականգնել իր մինչպահերազմյան ապրանքատարությունը, մինչդեռ Խորհրդային Միության ապրանքատարությունը 1913 թվականի հետ համեմատած ավելացել ե 150%-ով: Մեզ հարկավոր են նորանոր գծեր, վորպեսդի ճանապարհ տանք Կարագանդի քարածխին, ապահովենք Ուրալ-Կուզնեցկի կոմբինատի ավարտը և այլն:

Պարզ ե ինքնին, վոր այժմ ավելի քան յերբ և ե, տրանսպորտը կարիք ունի մեր արդյունաբերության ոգնությանը:

Տրանսպորտը պիտի ստանա 1931 թվին 1.038 շողեկառք, 47.400 ապրանքատար վագոններ և ցիստերներ և 1.467 մարդատար վագոններ:

Այսպես ե վորոշել կենտրոմի հունիսյան պլենումը:

Յեվ մեր կուսակցության կենտրոմի այդ վորոշումը ուժեղ խթան պիտի լինի տրանսպորտի ենդափոխական վերակառուցման, վորը ներկայումս հանդիսանում է սոցիալիստական շինարարության յետամասց վայրը, ու այդպիսով ապահովվի արդյունաբերության դրագացումը և նոր հսկաների, հարյուրավոր նոր գործարանների և ֆաբրիկների գործի գցելը:

ԽՍՀ Միության ժողովրդական տնտեսության հնդամյա պլանը, վոր կառուցված ե գիտական հիմքով, ամեն տեսակետից անվիճակիորեն ոժանական և մեր արդյունաբերական կենտրոնների ամենից ձեռնտու տեղափոխության: Արդյունաբերական հին ոայնները — Մուկվա, Լինինգրադ և Դոնբաս, — վորտեղ ներկայումս կենտրոնացած ե պետական արդյունաբերության բոլոր հիմնական գոնդերի 85%՝ պահպանում են հնդամյակի վերջումն ել իրենց տեղերը, վորպես առաջավոր ուայուններ, վորոնք սպասարկում են արդյունաբերության ամենաբարդ ճյուղերը: Բայց հնդամյակը միաժամանակ առաջ ե քաշում ազգային յետամասց ծայրագավառները, բարձրացնում ե նրանց բաժինը արդյունաբերության ընդհանուր վերելքի մեջ:

Մեր գործարանները և ֆաբրիկները ընդհուպ մոտենում են հումույթի աղբյուրներին: Շարժումը կատարվում է արևմուտքից դեպի արևելք: Մենք գիտեյինք, վոր Ուրալում և Սիբիրում ստեղծվում՝ յերկրորդ քարածխային-մետալուրգիական բազա Խորհրդային Միության համար: Կուղբասը և արեւլյան այլ ուայոնները բարձրացնում են իրենց արդյունաբերական ֆոնդերի տեսակարար կշիռը մինչև 19<sup>40</sup>%, ավելի քան յերկու անգամ այժմյանի համեմատությամբ: Հին ուայոնները շարունակում են զարգանալ հայուսն թափով՝ սակայն նրանց բաժինը ընկնում է մինչև 71%-ի:

Ըստհանուր առմամբ, հնդամյակը հիմք է տալիս պլանային և նպատակահարմար կերպով ինդուստրացման յենթարկելու Խորհրդային Միության բոլոր ուայոնները, և վոչ միայն հին ուայոնները վորտեղ մինչև հեղափոխտթյունը կենտրոնացած եր ոռուսական կապիտալի ամբողջ ուժը, վորպես բոռնցքի մեջ:

Ոռուսական կայսրության նախկին գաղութներում և կիսագաղութներում նոր արդյունաբերական կենտրոններ ստեղծելը վճռական հարված հասցեց մեծապետական շովինիզմին և Ռուսաստանում ապրող ազգերի անհավասարությանը:

Խորհրդային Միության արդյունաբերության աեղափոխության հետ միասին կենտրոմի հունիսյան պլենումը շեշտեց մի շարք այլ տեսակի արդյունաբերական ձեռնարկությունների տեղափոխության ահագին նշանակությունը, այն ե՞ քաղաքներից դեպի կոլխոզային ուայոնները:

Մեր որերում քաղաքները աճում են զարմանալի արագությամբ—ուայոնական կենտրոններում, արդյունաբերող գյուղերում, քարածխի հարեանությամբ, հանքերի մոտ: Ընկեր Ստալինը ազգարարակետ-մարքսիստների կոնֆերանսում արտասանած իր ճառում նախատեսում և նոր արդյունաբերական ոջախների արագագույն զարգացումը գյուղերում: Յեվ մենք տեսնում ենք, վոր քաղաքի և գյուղի անիջյալ հակառակությունը, վորը պահպանվել է դարերի ընթացքում, հիբավի սկսել ե չքանալ— և այն ել արագացած թափով— վերակառուցման ըրջանում: Քաղաքը իր յերեսը «դարձրել ե գյուղին», իսկ գյուղը իր հերթին՝ «դարձրել ե յերեսը դեպի քողի քողով»:

Յեվ դրանում զարմանալի վոչինչ չկա, վորովհետև քաղաքի և գյուղի սահմանները սկսում են «ծածկվել» արդյունաբերական ձեռնարկիներով:

Բանվոր դասակարգը ոգնում է կազմակերպելու նոր արդյունաբերական ոջախներ գյուղացիական ուայոններում, նոր քաղաքներ և ավաններ շինելուն և մերժում և տասնյակ վիթխարի քաղաքներ-պոլիտիզմներ ստեղծելու միտքը, ձգտելով հարցուրավոր և հազարավոր սոցիալիստական քաղաքներ կառուցելու:

Լենինը շարունակ կապում եր քաղաքային տնտեսության հարցը քաղաքի և գյուղի միջի հակաղության հարցի հետ, արդյունաբերության և յերկրագործության միացման հետ: Լենինը ցույց եր տալիս այն ճանապահները, վորոնք մի կողմից պիտի վոչնչացնեն գյուղական յետամնացությունը և մյուս կողմից՝ «հսկայական մասսաների հակարնական կուտակումը մեծ քաղաքներում»:

Մեր աչքի առաջ տեղի յե ունենում «մարդկության» նոր «շերտավորումը» (Լենին), Հասկանալի յե, վոր այդ պայմաններում քաղաքային տնտեսության հարցերը դուրս են գալիս քաղաքային բարեկարգության «սովորական» հարցերի շրջանակներից: Անաթե ինչու կենտրոմի հունիսյան պլենումը այդպես ուժեղ եր դրել քաղաքային տնտեսության խնդիրները՝ բնակարանային շինարարության, կոմունալ շինությունների, ջրանցքների, քաղաքային տրամսպորտի հարցերը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բանվոր դասակարգի բնակարանային պայմանները զգալի չափով փոխվել են դեպի լավը:

Հեղափոխության տարիներում, խոնավ նկուղներից և կիսանկուղներից, գետնափոր խրձիթներից և անկյուններից տեղափոխվել են հին տները հայուր հազարավոր բանվորներ (մոտ 500 հազար բանվոր միմիայն Մոսկվայում): Բացի այդ, վերջին ծ տարվա ընթացքում Խորհրդային Միության սահմաններում բնակարանային շինարարության գործի մեջ ե դրված 3.500 միլ. ուռելի: Դրա շնորհիվ ավելի քան մի միլիոն բանվորական բնատանիքներ ապրում են նոր տներում, իսկ այս տարի նոր տները կտեղափոխվեն նորից 600.000 բանվոր ընտանիքներ:

Այդ թվերը չափազանց պերճախոս են:

Մեր կուսակցության հենտկոմի հունիսյան պլենումը Մոսկայի որինակով պատկերացրեց վոչ միայն բնակարանային խնդրի բարելափումը, այլ և ամբողջ քաղաքային տնտեսության, մանավանդ վերջին տարիներում։ Մոսկայում տրամվայի ցանցը ավելացել է 262 կիլոմետրից (1913 թ.), 422 կիլոմետրի (1931 թվին), այսինքն՝ 61%-ով, ջրմուղու ցանցը 537-ից բարձրացել է 805 կիլոմետրի (50%), կանալիզացիան՝ 447-ից 627-ի (40%), ելեկտրական լուսավորությունը տվելացել է 340%-ով, նոր սալահատակած փողոցները բռնում են 2 միլիոն քառակուսի մետր տարածություն, վորոնցից 600 հազար մետրը կատարելագործված ձևով և շինված։

Ի՞նչ են ասում այդ փաստերը, Դրանք վկայում են, վոր քաղաքային անտեսության մեջ տեղի յեւ ունեցել վորոշ առաջադիմություն, վոր — ինչպես նշել ե Կենտկոմի պլենումը, — «քաղաքային անտեսությունը հիմնականում ավարտել է վերականգնման շրջանը և անցել է վերակառուցման շրջանին»։ Այդ թվերը սակայն ցույց են տալիս նաև, վոր աճման թափի կողմից քաղաքային անտեսությունը բայց և այնպես յեւ և մոռմ յերկրի ինդուստրացումից, ամբողջ սոցիալիստական շինարարությունից։ Նորից վերցնենք բնակարանային հրապարակը։ 1913 թվին, յերբ քաղաքի բնակչությունը աճում եր 8,40%, բնակարանները ավելանում եյին միայն 4,3%-ով։ Բնակարանների անբավարար աճելու պատճառով բնակարանային հրապարակի միջին նորման պակասել է 1926 թվի նորմայի դիմաց 1,4 քառակուսի մետրով։ Ուրեմն հասկանալի յեւ, թե ինչու բնակարանային ֆոնդը չի բավականանում գոհացնելու համար (թելուղ սանիտարական ամենամինիմալ չափով) այն բանվորներին, վորոնք ապրում են քաղաքում։ Հարկավոր և նորանոր տներ շինել, ել չենք խոսում՝ այն ժամկին, վոր անհրաժեշտ է կարգին խնամել հին տները, վորպեսզի նրանք ժամանակից առաջ չփչանան։

Մեր արդյունաբերությունը տարեց-տարի աճում է, նոր բանվորների թիվը մեծանում է, մենք յետ ենք մնում այդ աճից ու հասկացություն չունենք տալու բանվորներին հարկավոր բնակարաններ։ Նոր տներ շինելու գործում մենք յետ ենք մնում։ Մոսկայում, որինակ, արդյունաբերությունը ավելացել է 200%-ով, իսկ քաղաքային անտեսությունը միայն 50%-ով։

Մենք յետ ենք մնում նաև կոմմունալ տնտեսության մեջ։ Մեր քաղաքների կիսից ավելին չունեն ամենաանհրաժեշտ կոմունալ հիմնարկությունները, չունեն ջրմուղներ, իսկ վորտեղ ել վոր կան ջրմուղներ, դրանք չեն կարողանում սպասարկել ամբողջ բնակոր բնակչությանը։ Տրամվայ կա ՌՍՖՍՀ միայն 29 քաղաքում։ Քաղաքների  $\frac{2}{3}$ -ը նույնիսկ հասարակական բաղնիսներ չունի։ Ամբողջ Դոնբասում կա ընդամենը... 11 բաղնիս։

Զարգացող հին քաղաքների շարքում, վորոնք պահպանում և մեծացնում են իրենց արդյունաբերական նշանակությունը, մենք տեսնում ենք նոր արդյունաբերական կենտրոններ, վորոնք յերեխն ծագում են ուղղակի չոր գետնի վրա, ինչպես, որինակ, Դնեպրաստրոյը, Մագնիտագորսկը, Նոր ստեղծվող կենտրոններում տեղի յեւ ունենում հսկայական ջինաբարություն։ Վերջին յերկու տարիների — 1930 և 1931 — ընթացքում նոր շինություններ են կառուցվել և մասնագորապես պատրաստվել են շինանյութեր 11 նոր արդյունաբերական կենտրոններում 1.292 միլիոն ռուբլու։ Այդ նույն ժամանակամիջոցում 5 հին խոշորագույն կենտրոններում (Մոսկա, Լենինգրադ, Խվանովո-Կողնեսենսկ, Խարկով, Դնեպրոպետրովսկ) մացվել ե քաղաքային շինությունների մեջ շ200 միլիոն ռուբլի, իսկ 6 կիսանոր արդյունաբերական կետերում (Բուստի-Դոնի վրա, Յարուլավլ, Ստալինգրադ, Նիժ.-Նովգորոդ, Լիպեցկ, Վերողլովսկ) — 557 միլ. ռուբլի։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր մացրած դրամագլուխների մեծ մասը հատկացվում է վոչ թե հին քաղաքներին, այլ նորերին, վորոնք հետզետե անցնում են խոշորագույն արդյունաբերական կենտրոնների շարքը։ Նոր քաղաքները զարգանում են բանվորական ավաններից, ույոնական գյուղական կենտրոններից և այդ կապված ե շրջանների լիկիդացիայի և խոշոր սովորուներ, կոլխոզներ և մեքենա-տրակտորային կայաններ կազմակերպելու հետ։

Կուսակցությունը մերժում է թե աջ և թե «ձախ» թեքումները՝ նոր արդյունաբերական կենտրոններ կառուցելու գործում։ Կապիտալիզմը ստեղծել է բնակչության անբարական տեղագործը այն նպատակով, վոր կարելի լինի ավելի մեծ շահով շահագործել բանվոր գասակարգին։ Հակառակ աջ-ոպորտունիստական բանակի յերկշոտ «քաղաքագետներին», մենք արմատապես փոխում ենք

աշխատավորների տեղավորումը՝ ամբացնելով քաղաքային տնտեսությունը և բարելավելով բանվոր բնակչության լայն մասսաների նյութական-կենցաղային գրությունը:

Բայց մենք պայքարում ենք նաև «ձախ ֆուադի» դեմ, յերբ մեզ ասում են, վոր քաղաքները մենում են, վոր պետք ե «արխիվ գցել հին քաղաքները» և այլն։ Այդ «ձախ» խոսքերի տակ թագնված ե մանր-բութուական ատելություն բանվորական կենտրոնի դեմ և բանվորական մասսան զինաթափ անելու և բաժանրաժան անելու ցանկություն։

## ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ

Զարաչար կերպով ջարդ ու փշուր յեղան բուրժուական պրոֆեսոր-վնասաբարների և աջ ոպորտունիստների բոլոր մարզաբյություններն ու «Ժեորիաները»։ Բոյլէկիկական համարձակ տեմպերը վճռական հաղթություն տարան թե արդյունաբերության մեջ և թե կոլխոզային դաշտերում։

Խոշոր հանրայնացրած տնտեսությունը, չնայած մի շաբք տակավին չշտկված պակասություններին, վորոնք մատնավորապես կապված են բերքի բաշխման հետ, անհամեմատ ավելի շահավետ դուրս յեկավ, քան մանր-անհատական տնտեսությունը։ Բուրժուական թեորիան մանր տնտեսության կայունության մասին սապնի պղպջակի պես ողն ե ցնողում։ Բավական ե ասել, վոր մեր հսկաները արտադրում են ամենաեժան հացը՝ «Գիգանտի» (սովխող № 1) հացահատիկի ինքնարժեքը յերկու անգամ պակաս ե միջակ տնտեսության արտադրած հացի ինքնարժեքից։ Նոյն գյուղացիական ինքնառարի հասարակ գումարումը տալիս ե մեծ արտադրական եթքեկտ։

Ներկայումս մենք կանգնած ենք դժվարագույն, բայց մի փառավոր խնդրի առաջ, — հսկայական հաջողությունների հիման վրա մշակել նոր գյուղատնտեսական հնգամյակ, վորը ազատ լինի կյանքից արգեն յետ մնացած նախորդ պլաններից։ Նոր հնգամյակը, ի զանազանություն հին պլաններից, պետք ե ունենա վորպես դեկավորդ գաղափար, վորպիս դրոշակ — համատարած

կոլեկտիվացման ավարտը հնգամյակի վերջում և կուլակության, վորպես դասակարդի, լիկվիդացիան այդ հիման վրա։

Մենք պետք ե կառուցենք և կկառուցենք հացահատիկների նորանոր հսկայական գործարաններ՝ շինված տեխնիկայի վերջին խոսքի համաձայն։ Մենք պետք ե ձգտենք ամենամեծ տեմպերի՝ գյուղը տեխնիկապես զինելու, գյուղական տնտեսությունը, ինչպես և գյուղատնտեսական տրանսպորտը, մեքենայացնելու և ելեկտրիֆիկացիայի յենթարկելու, ուժեղացնելու հիմնական շինարարությունը և գյուղատնտեսական ռայոնների արտադրական մասնագիտացումը։ Բացի դրանից, մենք պետք ե ձգտենք արմատական հեղաշրջման՝ բերքը բարձրացնելու գործում։ Այդ բանում մենք յետ ենք մնացել նոյնիսկ հին պլաններից։

Առանձին ուշադրություն պիտի նվիրել հումույթի բաղային։

Զարգացնելով մեր տեխնիկական կուլտուրաները, ընդունակելով բարձրակարգի, ճականգեղի ցանքսը, մենք պակասեցնում ենք ապրանքային սովոր յերկրում և բարձրացնում բանվորների իրական աշխատավարձը։ 1931 թվականի պլանում տեխնիկական կուլտուրաների ցանքսի հրապարակի աճը նշված ե 4 միլիոն հեկտար կամ 37%։ Դա, անշուշտ, նոր զարկ կտա թեթև ինդուստրիայի զարգացմանը։

Նոր գյուղատնտեսական հնգամյակը պետք ե լինի և կլինի կուսակցության և բանվոր դասակարգի այդ քաղաքականության իրագործման զենքը։ Նոր գյուղատնտեսական հնգամյակը պետք ե լինի և կլինի պայքարի գործիք լայն սոցիալիստական գրոհի՝ ժողովրդական տնտեսության ամբողջ ճակատում, դասակարգային պայքարի զենքը։

Կուլակները ամեն կերպ ձգտում են խանգարել կոլխոզային շարժումը, դրա համար ել դասակարգային պայքարը, չնայած վոր սոցիալիզմի ուժերը գյուղում հսկայական չափով մեծացել են, — սրվել եւ կուլակները խոշոր պարտություն են կրել, բայց նրանք շարունակում են կոփվը։ Սակայն կոլխոզների և սովխոզների զարգացման չթուլացող տեմպերը ապահովում են սոցիալիստական սեկտորի վճռական հաղթությունը գյուղում։

Խորհուրդների VI համագումարը հրահանգել ե հասցնել ցանքսի հրապարակը սովխոզներում 1931 թվին մինչև 9,5 միլիոն հեկտարի, 1932 թ. — մինչև 14 միլիոն հեկտարի, 1933 թ. —

մինչև 19 միլիոն հեկտարի, Այդ թվերի մեջ մտնում են՝ Հացահատիկների Տրեստի գծով — 9,5 միլիոն հեկտար, անսանաբուծական գծով — 6 միլիոն հեկտար, Սայուզախարի գծով — 1.150 հազար հեկտար, տեխնիկական կուլտուրաների գծով (առանց Սոյուզախարի) — 1.150 հազար հեկտար, սերմացուների (Սոյուզենովոդ) գծով — 800 հազար հեկտար:

Համագումարը հավանություն ե տվել մեքենա-տրակտորային կայանների շինարարությանը 1931 թվին (մ.-տ. կայանների թիվը հասցնվելու յե 1040-ի, այդպիսով տրակտորների ուժը լինելու յե 1 միլիոն ձիու ուժի հավասար): Համագումարը նշել ե, վոր այսպիսով Խորհուրդների Վ համագումարի սահմանած հնգամյապլանը մեքենա-տրակտորային կայանների շինարարության վերաբերմամբ գերակատարվում ե 8 անգամ: Այնուհետև համագումարը առաջ ե քաշել հնգամյակի վերջում մեքենա-տրակտորային կայանների միջոցով տրակտորային և կենդանի քարշով միասին 70—80 միլիոն հեկտար կոլխոզային ցանքսեր կատարելու իրնդիրը, միաժամանակ նախազգուշացնելով, վոր «ձիու ուժի նշանակությունը չթերագնահատվի»: Այդ վիթխարի խնդիրների իրազործումը նշանակում ե, վոր սոցիալիզմի վճռական հաղթությունը, նշանակում ե, վոր սոցիալիստական սեկտորը տիրել ե ամբողջ ժողովրդական տնտեսության բոլոր լծակներին:

Սովխոզների աճմանը բոյլեկիկական բարձր տեմպերը վորոշում են նրանց ահագին գերը գյուղի սոցիալիստական վերակազմության գործում: Առանց հանրայնացված խոշոր գյուղական տնտեսության այդ կետերի, առանց հացահատիկների սովխոզների, վորպես «ցյուղի հին կարգերի վերակառուցման հիմական վողնաշարի» (Ստալին), մենք չեինք կարող վճռական հաղթություն ունենալ կոլխոզային շինարարության գծով:

Հացահատիկների սովխոզները տալիս են պետությանը բարձր ապրանքային պրոդուկցիա: Յերբ յերեք տարի առաջ մեր կուսակցությունը վորոշում կայացրեց սովխոզներ կազմակերպելու մասին, նա հույս ուներ հնգամյակի վերջում «ունենալ նրանցում 17,5 միլիոն ցենտներ հաց»: Բայց հացահատիկների սովխոզները այս տարի, այսինքն ժամանակից յերկու տարի առաջ, կտան 43 միլիոն ցենտներ, վորոնցից պետության տրամադրության տակ կլինի մոտ 20 միլիոն ցենտներ ապրանքային հաց:

Թե վորքան մեծ են մեր հաջողությունները զյուղական տնտեսության մեջ, կարելի յե դատել այս փաստերից: Կոլխոզային գյուղացիությունը դեռևս 1931 թվի գարնանը գերազանցել է իր քանակությամբ յեվրոպական վեց պետությունների ազգաբնակչությունների թիվը միասին վերցրած, այն եւ Ավստրիայի, Բելգիայի, Բոլգարիայի, Դանիայի, Լատվիայի և Լիտվայի: Կոլխոզին տարածությունների վրա կարող են տեղափորվել Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի տերիտորիան՝ Լեհաստանի հետ միասին: Կոլխոզային շինարարության վերաբերմամբ հնգամյակը կատարված է 2½ տարում, ըստ վորում մեկ և կես անգամ գերազանցելով:

Կազմակերպված հացամթերումը այս տարի կազմելու յե ընդհանուր հացամթերումների առնվազն 92—94%, ներառյալ նաև չքավոր և միջակ անհատականների հանձնելիք (վաճառելիք) հացը, վոր նրանք կոնտրակտացիայի հիմունքով պիտի տան:

Բայց չափազանց մեծ սխալ կլինի յենթագրել, վոր կազմակերպված հացամթերումը մեզանից վոչ մի ջանք չի պահանջում, և վոր հացը պետությանը հարկավոր չափով հանձնվի բնականաբար, միայն իշխանության հրամանով:

Մեր առաջն ե անցյալ տարվա խրատական որինակը: Մենք գիտենք, վոր մինչև այժմ շնորհիվ մի քանի կազմակերպությունների հանցավոր անհոգության, քյալազյողության և անպատճիւանատվության, մի շարք վայրերից դուրս չեն հանել հացը, վոր անցյալ տարի յեր գեռ մթերված և նորոգված չեն հին մթերանցները:

Ամեն մի բանվոր հասկանում ե, վոր բավական չե միայն ցանել հացահատիկը, — այլ հարկավոր ե նաև հավաքել՝ վորչափ կարելի յե քիչ կորուստներով, իսկ ապրանքային հավելումները ժամանակին հանձնել կառավարությանը:

Յեթե մենք այս տարի ամեն մի հեկտարի բերքը ավելացնենք 1/2 ցենտներով, այդ գեպքում Խորհրդային Ֆեդերատիվ Ռուսաստանում կհավաքենք մոտ 50 միլիոն ցենտներ հացի հավելումն: Բայց, հավելյալ պրոդուկցիայի համար, ի հարկե, հարկավոր ե ուժգին պայքարել:

Հավասարեցան վերացումը և դա պայմանավարձով (զգելնի) փոխարինելը անխտիր բոլոր աշխատանքներում, պիտի անցկացնել,

միաժամանակ վերացնելով դիմագրկությունը ինվենտարի նկատմամբ, — հարկավոր ե ամրացնել տրակտորներին, մեքենաներին և ծիերին աշխատավորների մշտական կազմ:

Աշխատանքի կանոնավոր հաշվարկության և կաղմակերպության համար վարած պայքարը ամենից առաջ հանդիսանում է պայքար մանր-բուրժուական տարրերի դեմ, պայքար՝ աշխատավորների արտադրողականության բարձրացման համար, պայքար կուլակի դեմ, վորը իր գրոշակի վրա գրել և հերթական լուղունգը — «հավասարեցումն»:

Զդելշչինան (փոխանակ որավարձի) հարվածում և մանր-բուրժուական ձգուումը՝ յեկամուտները «հավասար կերպով» բաժանելու գործում, հարվածում և այն ձգուումը, վորը գեռնս պահպանվել և կոլխոզային գյուղացիության մեջ, վորովհետև՝ «արտելում չի ավարտվում, այլ միայն սկսվում և նոր հասարակական դիսցիպլինայի ստեղծման գործը, գյուղացիներին սոցիալիստական շինարարության սովորեցնելու գործը» (Ստալին):

Առանց մի շաբաթ կոնֆլիկտների, առանց դժվարությունների այդ գործը չի հաջողվի: Վ. Ի. Լենինը գրել ե, վոր «մարդկայի պատմության մեջ բռնի աշխատանքի մեծագույն փոխարինումը այն աշխատանքով, վորը կատարվում և իր համար, չի կարող տեղի ունենալ առանց բաղխումների, դժվարությունների, կոնֆլիկտների, առանց բռնության՝ պնդարմատ ձրիակերների և նրանց պնակալեղների վերաբերմամբ»: Լենինի խոսքերը փառավորապես հաստատվում են կոլխոզային իրականության որինակներով:

Զդելշչինան ունի անվիճելի առավելություններ անհատական և որավարձի սիստեմների դիմաց՝ յեկամուտները բաշխելու խընդրում: Բերենք միայն մի որինակ: «Պրոգրես» կոլխոզում (Ուկրայինա) զդելշչինայի բացակայության պատճառով հարկավոր եր լինում բազուկի ընտրության վրա գործ գնել 28 բանվորական որ, փորփրելու համար՝ 23 որ, ստուգման վրա՝ 16 որ, իսկ զդելշչինայի դեպքում նույն աշխատանքի վրա գործ եր դրվում 16, 10 և 10 որ: Պարզ ե, վոր յեկամատի բաշխումը ըստ աշխատորերի (և վոչ թե մարդկանց թվի կամ ուղղակի որերի հաշվով) տալիս ե դրական արդյունքներ՝ հաշվի առնելով կոլխոզնիկի աշխատանքի քանակը և վորակը: Միմիայն զդելշչինայի դեպքումն են ստեղծվում այնպիսի պայմաններ, վորոնք հնարավորությունն են

տալիս իսկապես հասարակականորեն ստուգելու աշխատանքը և աշխատանքի արտադրությունը բաշխելու: Այդ խնդիրը պարզ ձեռվ ցույց ե տրված գյուղատնտեսական արտելի կանոնադրության մեջ, վորը նախատեսնում ե, վոր «արտելի անդամների աշխատանքի կանոնավոր կազմակերպության համար սահմանվում են պատրաստանյութի և գնահատության նորմաներ՝ ըստ աշխատանքի առանձին տեսակների, կատարվում ե հաշվարկություն՝ աշխատանքի քանակի և վորակի, կիրառվում ե աշխատանքի զգելնի վարձատրություն և որավարձի սիստեմ» (կանոնադրության հոդ. 14):

Զդելշչինայի հետ միասին նոր աշխատանքի հիմքը կոլխոզներում պիտի կազմի բանվոր դասակարգի չափազանց հարուստ փորձը սոցիալիստական մրցության և հարվածայնության գործում, «կոմունիստական աշխատանքի ծիլերի» այդ փորձը: Պրոլետարական հասարակայնությունը կարելույն չափ լայնորեն պիտի տա այդ փորձը շեֆարկյալ ույաններին և կոլխոզներին: Արդեն այդ ուղղությամբ կատարված առաջին քայլերը ցույց են տալիս, թե վորքան և բարձրանում աշխատանքի արտադրության մեջ կանությունը խոչըր գյուղատնտեսական արտադրության մեջ հարվածայնության և սոցմրցության շնորհիվ: Բըրիգաղը կոլխոզներում գառնում ե աշխատանքի կազմակերպության հիմնական ձեռնությունը:

Աշխատանքի կանոնավոր կազմակերպությունը կոլխոզներում, այնտեղ գտնվող տեխնիկական միջոցների կանոնավոր ոգտագործումը վոչ միայն կոլխոզների գործն ե, այլև բանվոր գյասակարգի, վորը ղեկավարում ե գյուղի սոցիալիստական վերաբերուցման գործը, ղեկավարում ե յերկրի ամբողջ սոցիալիստական շինարարությունը:

Կուսակցության Լենինյան կենտրոնը հաշվի առնելով հսկայական հաղթությունները բոլոր ճակատներում, վստահությամբ հայտարարեց իր վերջին ղեկամբերերյան պլենումում:

«Պլանի իրագործումը կոլեկտիվացման ասպարիգում անպայման գերակություն կտա սոցիալիստական տարրերին անհատական սեկտորի դիմաց գյուղում, կամրացնի բանվոր դասատական սեկտորի դիմաց գյուղացիության աշխատավոր մասսաների հետ և կարգի կապը գյուղացիության աշխատավոր մասսաների հետ կավարտի Խորհրդային Միության սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: Դա կլինի համաշխարհային-պատմական նշանակությունն ունեցող հաղթություն»:

## ՊԱՅՔԱՐ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը պահանջում եր խիստ բեկումն կուլտուրական ճակատում: Պատահական չե, վոր Համկոմկուսի հենց XV-րդ համագումարը 1927 թ. գետեմբերին առաջ քաշեց, վորպես ակտուալ խնդիր — կուլտուրական հեղափոխության խնդիրը: Հետագա շրջանի ընթացքում կուսակցությունը մի քանի անգամ կարևորագույն վճիռներ և կայացրել կուլտուրական շինարարության հարցերի նկատմամբ (մասնագետների կազմերի, անդրագիտության լիկվիդացիայի մասին և այլն):

Ինչպես հայտնի յե, մինչև հեղափոխությունը Ռուսաստանը գրագիտության կողմից Ցելյուպայում գտնվում եր ամենավերջին տեղում, իսպանիայից ել ցած:

Ցարիզմը մասսայական անգրագիտությունը համարում եր իր նեցուկը և ամեն կերպ կաշկանդում եր պայքարը անգրագիտության դեմ: Կերենչինայի շրջանը այդ կողմից վոչ մի շաբաթում առաջ չբերեց: Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունն եր, վոր ծավալեց մի չտեսնված կուլտուրական շինարարություն և ապահովեց անհամար հնարավորություններ կուլտուրական վերելքի համար:

Որինակ՝ անգրագիտության լիկվիդացիան: Ցարական Ռուսաստանում 1000 հոգուց 777-ը կարդալ չեյին իմանում (Գերմանիայում 0,4%, Շվեյցարիայում 0,5%, Անգլիայում 7%): Խորհրդային մարմինների և պետութարական հասարակայնության ջանքերով անգրագետների թիվը իջավ 1920 թվին հազարին մինչև 681 մարդու, 1926 թվին — 634: Բայց առանձնապես ուժեղ թափ ստացավ անգրագիտության լիկվիդացիան վերջին տարիները, ըստ վորում հարկավոր ե ընդգծել, վոր այդ հաջողությունը ապահովված եր չնորհիվ անգրագետների և կիսագրագետների հետ պարագելու նոր ձևերի և մեթոդների կիրառման (կուլտուրավագ, կուլտուրափետ և այլն):

Գրագիտություն սովորողների թիվը 1927—28 թ.թ. հասնում եր 1.565 հազարի, 1928—29 թ.թ. — 2.700 հազարի: Սովորողների այդ թիվը 1929—30 թ.թ. պիտի բարձրանար ըստ պլանի մինչև 7,5 միլիոնի՝ անգրագետների և կիսագրագետների դպրոց-

ների ավելի բարձր տեմպերի և մակարգակի դեպքում: Անգրագիտների իսկական ընդգրկումը ուժեղ չափով գերազանցեց այդ պլանային նախագծերը:

Սկզբում 1931 թվին նախագծված եր գրագիտություն սովորոցնել 17,5 միլիոն մարդու, բայց այդ թիվը գոխարինվեց նոր, ավելի բարձր թվով: Սովետական կառավարությունը նպատակ ե գրել 1931 թվին վերջնականապես վերացնել անգրագիտությունը և լայն ծավալել ուսումը կիսագրագետ պրոլետարիատի շրջանում քաղաքում և զյուղում՝ բանվորական հասակ ունեցողների մեջ, լիկվիդացիայի յենթարկել անգրագիտությունը և պայքարել կիսագրագիտության գեմ (քաղաքի աշխատավորների մեջ 16—50 տարեկան հաս.) և հիմնականում լիկվիդացիայի յենթարկել գյուղացիության սկզբնական անգրագիտությունը (16—40 տարեկան հասակ ունեցողների մեջ): համատարած կոլեկտիվացման ուսուններում:

Անգրագիտության վերացման այդ հակայական ծրագիրը պահանջում եր սովորողների թիվը հասցնել առողջին կիսամյակում 21,3 միլիոնի և յերկրորդ կիսամյակում (1931 թ.)՝ 25 միլիոնի: Անգրագիտությունը վերացնողների քանակությունը 1931 թվին 4 անգամ ավելի մեծ է, քան կուլտուրական հնդամյակի նախատեսած քանակությունն եր, վոր կազմել եր Խորհուրդների Համամիութենական համագումարը 1932—33 թվականի համար: Ավելին կասենք. ամբողջ հնդամյակում յենթարգրում եր սովորոցնել 18—19 միլիոն մարդ, այսինչ միայն 1931 թվին սովորելու յեն 21—25 միլիոն աշխատավորներ: Պարզ ե ամենքի համար, վոր կուլտուրական հեղափոխությունը Խորհրդային Միության մեջ դատարկ խոսք չե: Կուլտուրական հեղափոխությունը հրամայողաբար բաղնել ե զուռը և գրավել ե իր պատշաճ տեղը՝ ինդուստրացման և կոլեկտիվացման շարքում:

Այդ մասին կարելի յե դատել վոչ միայն անգրագիտության վերացման դպրոցներում սովորողների թվից:

Անցնենք կուլտուրական շինարարության մի ուրիշ կարևորագույն ճյուղին — ընդհանուր ուսուցմանը: Այստեղ ևս մենք տեսնում ենք զուտ բոյլեկեկական տեմպեր, վորոնց վոչ մի յերկիր գեռևս չի գերազանցել:

Ցարական Ռուսաստանում նույնիսկ ամենաբարձր տեմպերի տարիներում (1905—1914 թ.թ.) սկզբնական ուսուցման աճը

կազմում եր 45,2%, մինչեռ այդ աճը Խորհրդային ֆեղերատիվ Ռուսաստանում միմիայն 1923—31 թ.թ. կազմում եր 105,2%: Ինքնակալու թյան ժամանակ ընդհանուր ուսուցման հարցը դրվել է մի քանի անգամ, բայց միաժամանակ ժամանանչվում եր այդ հարցի անիրազործելի լինելը: Ժողովրդական «Հուսափորության» մինհստրությունը ամենահամոզիչ յեղանակով ապացուցում եր, վոր Ռուսաստանում կարելի յե ընդհանուր ուսուցումն մտցնել միայն... 125 տարուց հետո: 1911 թվին կալվածատիրական զեմստվային համագումարում ընդհանուր ուսուցման համար «մարտնչողներից» մեկը, մի վո՞թ Յեղերսկիյ, հայտարարեց, վոր «առնվազն մի ամբողջ սերունդ կանցնի, մինչև վոր ընդհանուր ուսուցման գաղափարը իսկապես կիրագործվի»:

Ի՞նչ ենք տեսնում մենք գործնականում: Հնդամյա պլանի վերջնական վարիանտով ընդհանուր ուսուցումն մտցնելու պլանը պիտի կատարվի ամբողջ Խորհրդային Միության մեջ հնդամյակի վերջում, այսինքն 1932—1933 թվին: Ակղքնական դպրոցներում սովորողների թիվը ըստ պլանի բարձրանում է 9,942 հազար աշակերտից (1927—1928 թ.) մինչև մոտավորապես 17,000 հազարի՝ 1932—33 թվին: Ուսուցիչների բանակը ավելանում է 264,6 հազարից (1927—28 թ.) մինչև 440 հազարի (1932—33 թ.):

Հստ այսմ զյուղը և յետամնաց ժողովուրդները հասում են պրոլետարական քաղաքին և արդյունաբերական կենտրոնական ույսուններին: Բոյլշեվիկական բարձր տեմպերը թույլ են տվել ստցնել յերեխանների ընդհանուր պարտադիր սկզբնական ուսուցումը 8—10 տարեկան հասակում ավելի վաղ, քան յենթադրվում եր, այսինքն հնդամյակի վերջանալուց առաջ, այն ե՝ 1930—31 թվից: 1930—31 թվականից ընդհանուր ուսուցման մեջ կանցնեն նաև 11 տարեկան յերեխանները, Միայն ամենայետամնաց աղքային հանրապետությունները և շրջանները իրավունք են ստացել մտցնելու ընդհանուր ուսուցումը ավելի ուշ, այսինքն հնդամյակի վերջում:

Համկոմկուսի կենտկոմը պարտադիր և համարել նաև 11—12 տարեկան մասնուկների ուսուցումը վորոնք չեն յեղել սկզբնական դպրոցներում:

«Դլխավորն այն է այժմ, վոր անցնենք պարտադիր սկզբնական ուսուցման, — ասել ե ընկ. Ստալինը Համկոմկուսի XVI-րդ

համագումարում: — Յես ասում եմ «գլխավորը», վորովհետև նման քայլը կիներ վճռական՝ կուլտուրական հեղափոխության գործի մեջ: Իսկ վաղուց հասել ե ժամանակը՝ անցնելու այդ գործին, վորովհետև մենք այժմ ունենք բոլոր անհրաժեշտ տվյալները՝ կազմակերպելու համար ընդհանուր սկզբնական ուսուցումը Խորհրդային Միության ույսունների մշշող մեծամասնության մեջ: Համկոմկուսի XVI-րդ համագումարից մի տարի անցած Խորհրդային Միության համարյա բոլոր ույսունները հիմնականում ընդգրկել դպրոցական հասակ ունեցող յերեխաններին և մտցրել են պարտադիր սկզբնական ուսուցումը:

Մինչդպրոցական դաստիարակություն, սկզբնական ուսուցում — զբանք նախապատրաստական աստիճաններն են սոցիալիստ, շինար, գիտակից մասնակիցներ՝ պատրաստելու համար: Հետեւյալ աստիճանը յոթնամյա դպրոցներն են՝ բարձր տիպի դպրոցները, վորոնք հին ժամանակ կոչվում եյին «միջնակարգ դպրոցներ»: Ուսւմ համար եյին ցարական ժամանակ միջնակարգ դպրոցները — զիմնադիմաները, ռեալական դպրոցները, պրոգիմնազիաները և այլն: Միջնակարգ դպրոցներում սովորողների դասակարգային կազմի մասին ցարական ժամանակում վկայում են հետեւյալ տվյալները (առ 1-ն հունվարի 1914 թ.): 100 աշակերտից 25-ը ազնվականների և չինովակինների վորդիներն եյին, 5-ը տերտիերների, 10-ը վաճառականների, 32-ը քաղքենինների և սեփական արհեստանոցներ ունեցողների, 26-ը կուլակների և ունմոր գյուղացիների: Բանվորների յերեխանները և չքավոր ու միջակ գյուղացիների յերեխանները, չնչին բացառությամբ, հնար չունեյին արտոնյալ դպրոցն ընկնելու: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հին գիմնազիան կործանվեց և նրա ավերակների վրա ստեղծվեց աշխատավորական դպրոցի յերկրորդ աստիճանը: Ներկայումս յոթնամյակները վերակադրվում են ֆաբրիկ-գործարանային յոթնամյակների տիպով, պոլիտեխնիկացիայի հիմունքով, այսինքն՝ միացներով թեորիան պրակտիկայի հետ և ծանոթացնելով սովորողներին արտադրության բոլոր հիմնական տեսակների հետ: Յոթնամյակի կազմի բանվորացումը տեղի յե ունենում արագագույն տեմպերով: Յոթնամյակներում սովորողների թիվը պիտի հասցնել ըստ պլանի 1.250 հազարից (1927—28 թ.) մինչև 1.843 հազարի հնդամյակի վերջում: Պետք ե նկատենք այստեղ, վոր

սովորողների թիվը քաղաքում բարձրանում է 883 հազարից մինչև 1.230 հազարի, այսինքն՝ 39,30% ունի, իսկ գյուղում մինչև 613 հազարի, այսինքն 67,0% ունի: Դրանով ստացվում է քաղաքի և գյուղի հակադրման աստիճանական վերացում:

Առանձին հաշվարկության պիտի առնել այսպես կոչված Փաբրիկ-գործարանային յոթնամյակները՝ քաղաքում և գյուղացիական յերիտասարդության դպրոցները՝ գյուղում, վորոնց որինակով վերակառուցվում է դպրոցական կրթության ամբողջ սփառմը: Բարձր տիպի դպրոցը Խորհրդային Միության մեջ հիմնականում ծառայում է վորակյալ բանվորական ուժ մշակելու գործին և գիտակից մաստիկներ պատրաստելուն սոցիալիստական շինարարության համար:

Վերակառուցման շրջանի հենց սկզբից Խորհրդային Միության մեջ ուժեղ կերպով զգացվեց վորակյալ բանվորական ուժի, կաղըերի պակասություն: Բներենք մի քանի որինակներ: Ժողովրդական տնտեսության այնպիսի կարենոր ճյուղի նկատմամբ, ինչպես սիլիկատների և շինանյութերի արտադրությունն ե, տեխնիկումներում կային ընդամենը 230 սովորողներ, մինչպես հնգամյա պլանի սկզբնական ծրագրով արդյունաբերությունը պահանջում եր այդ ճյուղերի համար 1930—31 թվին ավելի քան 3.000 միջին վորակի մասնագետներ: Շինարար տեխնիկների կարիքը տասնյակ հազարների յե հասնում, մինչդեռ կան միայն մի քանի հազար ուսանողներ: Նույնը մենք տեսնում ենք նաև գյուղատնտեսական տեխնիկումների, բարձրագույն դպրոցների վերաբերմաբ:

Հնդամյակի վերջում մասնագետների ընդհանուր քանակությունը կարիքի համեմատ կլինի ընդամենը 1.212.700 մարդ, վորոնցից բարձր վորակի՝ 354.140 մարդ, միջին վորակի՝ 858.560 մարդ, վորոնց թվում 763.600 տեխնիկական-ինդուստրիալ մասնագետներ:

Ինժեներների և տեխնիկների թիվը ավելանալու յե 4 անգամ, գյուղատնտեսական կաղըերինը՝ 7,5 անգամ, տնտեսագետներինը՝ 2,6 անգամ: Մասնագետների բոլոր կադրերը ընդհանուր առմամբ ավելանալու յեն 4 անգամ:

Ավելացնենք և այն, վոր բոլոր մասնագետների համարյակեսը, 48%-ը պատրաստվելու յե հնգամյակի վերջում բանվորնե-

րից: Խորհրդային Միության մեջ այդ ժամանակ մենք կունենանք 100.000 բանվոր ինժեներներ: Պարզ ե, վոր այդ նախապատրաստությունը պահանջում է միջոցառումների մի ամբողջ սիստեմ: Այդ սիստեմի մեջ ահազին տեղ են բռնում ֆաբրիկ-գործարանային դպրոցները: Դեռևս Մարքսը գրել ե, վոր աշխատանքը դաստիարակության և կրթության լավագույն ձեւն ե: Մարքսը գրել ե, վոր ուսումը սերտորեն կապված պիտի լինի արտադրության հետ, վոր ուսուցման հիմք պիտի առնել աշխատանքը, վոչ թե ծանր, ֆիզիկական, հյուծող աշխատանքը, այլ թեթև, յերեխայի ուժերին մատչելի և այն ել պոլիտեխնիկան աշխատանքը, այսինքն այնպիսի աշխատանքը, վորը գաղափար և տալիս արտադրության բոլոր կարեռագույն տարրերի մասին, և վոչ թե միայն նրա մի կողմի մասին: Արտադրության ուսումնամասիրությունը կապված պիտի լինի գիտությունների ուսումնամասիրության հետ, վորոնց վրա հիմնվում ե ովյալ արտադրությունը, որինակ՝ մաթեմատիկան, քիմիան, մեխանիկան և այլն: Ֆաբրիկ-գործարանային աշխակերտության սովորական դպրոցները և ֆաբրիկ-գործարանային յոթնամյակները մոտ են Մարքսի գաղափարը իրագործելուն աշխատավորական դպրոցի խնդրում, վորը կենինը ջերմ պաշտպանում եր: Ներկայումս Խորհրդային Միության մեջ ուժեղ կերպով ծավալվում ե բոլոր դպրոցների պոլիտեխնիկացցումը վարից վեր:

Այն հիմնականը, վորը կարմիր թելով անցնում է Խորհրդային Միության ամբողջ դպրոցական սիստեմով, սկսած մեծահասակ անգրագետների և յերեխաների սկզբնական դպրոցներից մինչև բարձրագույն դպրոցները և գիտական-հետազոտական ինստիտուտը, — այդ այն սերտ կատեն ե, վոր կա դպրոցի և սոցշինարարության խնդիրների միջև: Կադրերի համար մզգող պայքարը ծավալվում ե «տեխնիկակային տիրանալ», «գիտությանը տիրանալ» լոգունգներով: Բանվորական կրթության միասնական սիստեմը (անգրագիտությունը լուծարող կետեր, միջանկյալ դասընթացներ, արտադրական-տեխնիկական դասընթացներ, բանվորական տեխնիկական դպրոց, տեխնիկում, բարձրագույն տեխնիկական դպրոց) պիտի ապահովի ամեն տեսակ վորակի և նախապատրաստության բանվորների ուսուցումը: Շատ ձեռնարկություններում, վորոնք անցել են յոթմամյա բանվորական որին,

ութերորդ ժամը — «ուսուցման ժամը» հատկացվում ե պարագ-  
մունքներին հենց ձեռնարկության մեջ գտնվող ուսուցման կոմ-  
բինատում: «Ամո» գործարանում (Մոսկվա) ուսուցման կոմբինա-  
նատում սովորում են ավելի քան 3.000 բանվորներ: այստեղ կան  
անգրագիտությունը վերացնող կետ, համբարային դպրոցներ և  
հատուկ դպրոցներ, վորտեղ պատրաստում են բրիգադիներ և  
վարպետների ողնականներ, վարպետներ և ինժեներներ: «Կմոն»  
միակ գործարան-բարձրագույն տեխնիկական դպրոցը չե Խորհր-  
դային Միության մեջ: Բանվոր դասակարգը հաղթում ե այն  
բոլոր արգելքներին, վորոնք գտնվում են գիտության, ուսման  
և տեխնիկայի ճանապարհին: «Մեր առաջ կանգնած ե ամրոց,—  
ասել ե ընկ. Ստալինը սոցիալիստական արդյունաբերության  
աշխատավորների համագումարում—դա կոչվում ե գիտություն,  
իր բազմաթիվ ճյուղերով: Այդ ամրոցը մենք պիտի վերցնենք,  
ինչ գնով ուզում ե լինիս: Տեխնիկային տիրանալ — ահա թե  
ինչն ե դարձել Խորհրդային Միության պրոլետարիատի հերթա-  
կան խնդիրը, այն պրոլետարիատի, վորը իրագործում ե սոցիա-  
լիստական շինարարության մեջ պլանը:

Կուսակցության և Սովետական իշխանության հղոր զենքն ե  
հանդիսանում՝ տեխնիկայի և սոցիալիզմի համար մզկող պայ-  
քարի մեջ՝ մամուլը, վորը հենվում ե 2 միլիոնանոց բանդյուզ-  
թղթակիցների ակտիվի վրա: Հեղափոխությունից առաջ Ռու-  
սաստանում լրագրների տիրաժը հասնում եր ընդամենը  
2.200.000-ի, Խորհրդային Միության մեջ այդ տիրաժը հասել ե  
առ 1931 թիվը 27 միլիոնի, այսինքն ավելացել ե 10 անգամ:  
Լույս տեսնող գրքերի անվանագրով Խորհրդային Միությունը  
գենես 1927 թիվը բռնում ե առաջին տեղը:

Մամուլը Խորհրդային Միության մեջ հանդիսանում ե խսկա-  
կան կոլեկտիվ ագլուստոր, պրոպագանդիստ և կազմակերպող:  
Հարեւանցի կերպով հիշենք կուլտուրական ճակատի սոցիալիս-  
տական շինարարության մյուս լծակների մասին:

Հնդամյա պլանը նշում ե մասսայական քաղ-լուս հիմնարկ-  
ների մեծ աճը: Բանվորական ակումբների թիվը պիտի բարձ-  
րանա 25%-ով, համնի 7646-ի, իսկ ժողովրդական տները և  
գյուղացու տները նույնպես պիտի ավելանան 25% -ով և հասնեն  
6920-ի: Ակումբները, կարմիր անկյունները ձեռնարկությունների

մեջ և հանրակացարաններում կազմակերպում են բանվորական  
մասսաների ազատ ժամերը: Վերջին տարիներում հետզհետե  
ավելի լայնորեն են զարգանում այսպիս կոչված հանգստության  
հինգերորդ որից բազաները կուլտուրայի և հանգստության պար-  
կերում, «կանաչ քաղաքում» (Մոսկվայի մոտ) և ամարանցնե-  
րում, վորտեղ բանվորները անց են կացնում իրենց ազատ որերը  
մի չնշին վճարով: Պարզ է ինքնըստինքյան, վոր Խորհրդային  
Միության մեջ բանվորի հանգստության կազմակերպության ամ-  
բողջ աշխատանքը որգանապես կաղված և քաղաքական դաս-  
տիարակության, արտադրական-տեխնիկական պլուզագանդի և  
ուսուցման հետ: Խորհրդ-ընթերցարանների թիվը հնդամյակի  
վերջում ավելանում ե 750%-ով (մինչև 38.283): Մնայուն գրա-  
դարանների թիվը բարձրանում ե 50%-ով (մինչև 34.338), բացի  
գրանից, շաբաթական գրադարանների ցանցը բարձրանում ե  
մինչև 40.000-ի:

Ուժեղորեն կավելանա ուղիղուցանցը:

Սոցիալ-կուլտուրական շինարարության բոլոր ծախսերը ըստ  
հնդամյա պլանի վորոշված ենին 16.320 միլիոն ռուբլի: Հնդա-  
մյակի յերրորդ տարում լուսավորության, գիտությունների,  
առողջապահության և սոցիալական ապահովության վրա վորոշ-  
ված ե ծախսել 6.622. միլիոն ռուբլի, վոր զգալի չափով գերա-  
զանցում ե սկզբնական նախահաշվից:

Խորհրդային Միությունը մի յերկիր ե, վորը տալիս ե կուլ-  
տուրական աճման չտեսնված աեմպեր, վորտեղ յուրաքանչյուր  
յերեք մարդուց մեկը սովորող ե, մի յերեսույթ, վորով չի կարող  
պարձենալ ուրիշ վոչ մի, նույնիսկ ամենաքաղաքակրթված»  
յերկիր աշխարհիս յերեսին: Մենք չենք խոսում այլևս նախահե-  
զափոխական Ռուսաստանի կուլտուրական մակարդակի մասին,  
վորը, ի հարկե, չի կարող ծառայել վորպես չափ Խորհրդային  
Միության հաջողությունների համար:

Մոտ 50 միլիոն սովորողներ (1931 թվի յերկրորդ կիսում):  
Վոչ ավելի և վոչ պակաս:

Ահա պրոլետարական դիկտատուրայի 14 տարվա գումարնե-  
րից մեկը:

## «ՊԱՏՎԻ, ՓՄՈՒՔԻ, ԱՐԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ Ե»

Խորհրդային Միության մեջ չկան գործազուրկ մարդիկ: Սոցիալիստական շինարարության հսկայական թափը, վորը գերազանցել է հնգամյա պլանի տեմպերը, վերջ ե տվել գործազրկությանը, առաջ ե բերել չտեսնված պահանջ կաղրերի և բանվորական ուժի: Հնգամյակի սկզբում ամեն տեսակ վնասարարները և աջ ոպորտունիստները կարծում ենին, վոր գործազրկությունը մտտիկ ժամանակում չի վերջանա, վոր ընդհակառակն, այդ չարիքը ուժեղանալու յի ժողովրդական տնտեսության վերակառուցման հետ միաժամանակ:

Կյանքը ջարդուփշուր արագ վնասարար-հոռետես «Ժարգարեությունները», Խորհրդային Միության բանվոր դասակարգը փայլուն կերպով վերջացրեց մի այնպիսի վիթխարի գործ, ինչպես գործազրկության լիկվիդացիան ե:

Մեղանում վոչ միայն չկա գործազրկություն, այլ և սկսած 1930 թվականից Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության մեջ զգացվում ե սուր կարիք ինչպես վորակյալ նույնպես և հասարակ բանվորական ուժի: Բանվորական ուժի պակասը 1930 թվին զգացվում եր ժողովրդական տնտեսության բոլոր սեղոնային ճյուղերում, քարածխային արդյունաբերության մեջ, ջրային և յերկաթուղային արանսպորտի վրա, բեռնաբարձրենսաթափ աշխատանքներում, անտառանյութերի պատրաստման գործում և այլն: Սոցիալիստական շինարարության բոյլշիկական բարձր թափերը առաջ են բերում ահազին պահանջ բանվորական ուժի պահեստները ողտագործելում:

Աշխատավորական ուժերի հսկայական աղբյուր և հանդիսանում ամենից առաջ զյուղը: Մի քանի կեղծ-թեորետիկներ ոպորտունիստական բանակից յեղակացություններ են անում, վոր զյուղի դերը, վորպես բանվորական ուժի պահեստի, վորպես թե չքանում և զյուղական տնտեսության մասսայական կոլեկտիվացման հետևանքով: Դա սխալ ե:

Ընդհակառակն, հենց հիմա յի ծնունդ առնում զյուղացիական նոր հոգեբանություն, հենց այժմ ե, վոր սոցիալիստական քաղաքը կերպարանափոխում և զյուղը: «Հին տիպի զյուղացին իր

գաղանային անվատահությամբ դեպի քաղաքը, վորպես կողոպատողի, մնում ե մեր յետերը՝ Նրան փոխարինում ե նոր զյուղացին, զյուղացի-կոլխոզնիկը, վորը նայում ե քաղաքին հուսով» (Ստալին):

Փոխվել են, և այն ել խիստ են փոխվել բանվորական ուժի հավելումի վերաբաշխման պայմանները, փոխվել և փոխվում ե զյուղի սոցիալական-տնտեսական դեմքը: Դա ճիշտ ե: Դրա համար ել Խորհրդային Միության մեջ պայքարում են բանվորական ուժ հավաքելիս այսպես կոչված՝ «ինքնահուր» գեմ: Բանվորական ուժի վերաբաշխման ժամանակ հարկավոր ե յելնել զյուղի կառուցվածքի մեջ յեղած փոփոխությունների հաշվից, դասակարգային լարված պայքարի հաշվարկությունից: Բայց բոլորովին ասվիճելի յե, վոր կոլեկտիվացող զյուղում բանվորական ուժի պահեստները կան: Կոլեկտիվացումը բարձրացնում ե աշխատանքի արտադրողականությունը կոլխոզներում զյուղացիական անհատական տնտեսությունների համեմատությամբ և ստեղծում ե խնայողություն բանվորական ուժի ոգտագործման մեջ: Աշխատանքի հետագա մեքենայացումը ավելի ևս կրածըցնի աշխատանքի արտադրողականությունը:

Բանվորական ուժի չոգտագործած պահեստները բաղաքներում կամ մեծ կամ փոքր չափով:

Աշխատանքի ամենազիմանալու պահեստը քաղաքում հանդիսանում են բանվորների կանայք և առանաբարակ աշխատավոր նույնական բանական բարձրացնումը չափանաս անդամները, վորոնք մի վորեւ պատճառով մինչև այժմ չեն մտել արտադրության մեջ:

Մեր սոցիալիստական շինարարության մեջ բոլորի համար ել աշխատանք կճարվի: Գործազրկություն չկա, վորովհետեւ Խորհրդային Միության ժողովրդական տնտեսությունը ահագին պահանջ ունի նոր բանվորական ուժի:

Միմիայն 1931 թվականի համար պահանջվում եր լրացուցիչ մոտ 1,5 միլիոն բանվոր, իսկ զյուղական տնտեսության հետ միասին — ավելի քան 2.000.000 մարդ:

Մանավանդ արագորեն աճում ե բանվորների թիվը շինարարության մեջ, վոր ցույց ե տալիս ԽՍՀ Միության ժողովրդական տնտեսության վերակառուցման բարձր տեմպերը:

Վորչափ ամրանում ե տնտեսությունը, նույնչափ բարելավշում են բանվոր դասակարգի աջևատանքի պայմանները:

1897 թվի որենքի համաձայն, բանվորական որի տեղությունը Ռուսաստանում չեր կարող... 11—12 ժամից ավելի լինել: Սակայն կապիտալիստները հնարներ եյին գտնում զանց առնելու նույնիսկ այդ տաժանակիր որենքը, յերկարացնելով իրենց ոգտին բանվորական որը այնչափ, վորչափ կներելին նրանց վարձու ստրոկների ֆիզիքական ուժերը: 1905 թվականի հեղափոխությունը ստիպեց բուրժուազիային մի քիչ չափավորել իր ախորժակը, սակայն առաջին հեղափոխությունից հետո ել բանվորական որի տեղությունը հասնում եր 10 և ավելի ժամերի, որինակ, տեքստիլի աշխատավորները գործում եյին 10,5 ժամ մի հերթուի Ռուսաստանում բանվորական որի տեղությունը հասել եր 10 ժամի միջին հաշվով: Մինչև 1917 թվի հեղափոխությունը բոյլերիների առաջ քաշած ծրագիր-մինիմումի ամենազլիսավոր կետերից մեկը 8 ժամյա բանվորական որի պահանջն եր: ։

Բայց միայն Հոկտեմբերյան հեղափոխությունը տվեց բանվոր դասակարգին կատարյալ հաղթություն այդ խնդրում: Հոկտեմբերյան հեղափոխությունից յերեք որ անցած հրատարակվեց գեկետ 8 ժամյա բանվորական որի մասին:

1927 թվին, Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյա տարեղարձին կուսակցությունը և կառավարությունը հայտարարեցին իրենց վրորումը. «ապահովել մոտիկ տարիների ընթացքում անցնել 8 ժամիա որից» 7 ժամյա բանվորական որին՝ առանց պակասացնելու աշխատավարձը:

Կուսակցությունը և կառավարությունը նշանակել եյին ժամանակ այդ վիթխարի աշխատանքի առաջին ետապի համար. «վոչուշ, քան մի տարուց հետո»: 1928 թվից Խորհրդային Միության մեջ սկսվում ե կանոնավոր կերպով ֆարբիկների և գործարանների անցը 7 ժամյա բանվորական որին «համաձայն ֆարբիկ-գործարաձեռնարկությունների վերասարքավորման և ուստի ընթացքման» ընթացքին և աշխատանքի արտադրողականության աճմանը» (Խորհրդային Միության Գործկոմի մանիֆեստից, 1927 թ. հոկտ. 15):

Համկոմկուսի XVI-րդ համագումարում ընկ. Ստալինը ասել ե բանվորական ժամանակի պակսելու արդյունքի մասին.

«... Ավելի քան 830 հազար արդյունաբերական բանվորների (33,5%) 7 ժամյա բանվորական որին անցնելը ավելացած դրան 1.1 միլիոն արդյունաբերական բանվորների (63,4%) հնգորյաշաբաթին անցնելը, ավելացրած բանվորների համար հանգստի աների լայն ցանցի, սանատորիաների և կուրորտների առկայությունը, վորոնցով անցել են վերջին 3 տարվա մեջ ավելի քան 1.200 հազար բանվորներ, — այս ամենը ստեղծում ե բանվոր դասակարգի աշխատանքի և կենցաղի այնպիսի պայմաններ, վորոնք հնարավորություն են տալիս սնուցանելու բանվորների նոր, առողջ և կենսուրախ սերունդ, ընդունակ՝ բարձրացնելու սովետական յերկը հղորությունը պատշաճ բարձրության և պաշտպանելու նրան իրենց կրծքով թշնամիների հարձակումների գեմ»:

1930 թվի ոգոստոս-սեպտեմբեր ամիսներին Խորհրդային Միության մեջ անցել եր 7 ժամյա բանվորական որին բոլոր բանվորների 40,1%-ը: 1930 թվի վերջում արդյունաբերության մեջ աշխատող բոլոր բանվորների 45,5% աշխատում եր 7 ժամ: Փոխանակ սկզբում վորոշած ժամանակի, այն՝ ե 1933 թվի հոկտեմբերի 1-ին, այսինքն հնգամյակի վերջում, այժմ նշանակված ե Համկոմկուսի XVI-րդ համագումարի վորոշմամբ նոր ժամանակ, այն ե. 1931—1932 թ.՝ —

1931 թվի վերջում 7 ժամյա բանվորական որին կանցնեն տրանսպորտի արդյունաբերության 3,5 միլիոն բանվորներ: Արդյունաբերության մի շարք ճյուղեր ամբողջովին անցել են 7 ժամյա բանվորական որին. ելեքտրո-տեխնիքական, քիմիական և կարի արդյունաբերությունները:

7 ժամյա բանվորական որին անցնելու հետ միասին բանվորական կենցաղի վերակառուցմանը նպաստում ե կրծատած անընդհատ շաբաթի (հնգամյակի) մտցնելը, Բանվորը մեղանում աշխատում ե չորս որ, իսկ հինգերորդ որը հանգստանում ե: Բանվոր դասակարգը դրանով հասցրեց սուկալի հարված տերտերականությանը, կրօնական սնանավատությանը, վերջ տվեց այսպես կոչված՝ յեկեղեցական տոներին, հանգիստը դարձեց ավելի համաշափ, ավելի հաճախակի և ստեղծեց պայմաններ յերկը չտեսնված կուլտուրական վերելքի համար: Բանվոր դասակարգը դրա հետ միասին գեն ե շաբաթում իրենից անընդհատ աշխատանքի ապորինի ուղեկցին — դիմացրկությունն ու հավաարարությունը:

Աշխատելով նոր ձևով, բանվոր դասակարգը ավելի և ավելի լայնորեն զարգացնում է սոցիալիստական մրցությունը և հար-վածայնությունը:

Կապիտալիստական հասարակության զարգացման հիմքում դրված է մրցումը, շահի յետեից ընկնելը, մարդը մարդուն շա-հագործելը: Խորհրդների յերկում զարգացման մղող ուժ հանդի-սանում է մի այլ բան, այն ե՞ւ սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը:

Սոցիալիստական մրցության եցությունը կայանում է նրա-նում, վոր կազմակերպությունները, կոլեկտիվները և առանձին ողարնիկները կապում են իրար մեջ պայմանագրեր, վորոնցով առնում են իրենց վրա վորոշ պարտականություններ արդին-պլանը կատարելում ինչպես քանակի, նույնպես և վորակի կողմից:

«Սոցմրցության սկզբունքներն են. ընկերական ոգնություն հասցնել յետամացներին առաջալվորների կողմից այն հաշվով՝ վոր ընդհանուր վերելք ձեռք բերենք» (Ստալին):

Հարվածայնությունը, աւսինքն աշխատանքը նոր ձևով, բարձր լարված տեմպերով, մասսաների ստեղծագործական ինքնագործ-նեյության շնորհիվ ստացել ե բազմագան ձևեր և իր մեջ և ընդ-գրկել աշխատանքի, արտադրության ենտուղիաստներին:

Վերջերս լայն ծավալ և ստացել սացիոնալիզատորական հարվածայնությունը: Հիմնարկությունների մեջ սացիոնալիզա-տորական խմբերը և բրիգադները զառնում են ուդարնիկների սացիոնալիզատորական կոլեկտիվները, վորոնք սովորաբար գոր-ծում են ինժեներա-տեխնիկական ուժերի հետ ձեռք ձեռքի:

Սրտցոմի անվան շախտը առաջ ե քաշել հարվածայնության նոր ձեւ հասարակական բուքսիր, առնելով իր խնամքի և հսկո-ղության ներքո Հոկտեմբերյան հեղափոխության անվան յետա-մաց շախտը:

Միջանցիկ բրիգադների ձեռներեցությունը պատկանում է Ռուստովի հսկային — Սելմաշին: Սյդ գործարանում յերկար ժամա-նակ տեղի եյին ունենում ընդհատութիւններ այն պատճառով, վոր առանձին համբարությունները (ձուլող, կաղապարի կամ գարբ-բող — սեղմող) ուշացնում եյին մեքնաների մասը մասերը պատ-րաստելը: Դրա համար ել գյուղատնտեսական մեքենաներ գոր-

ծարանը պատրաստում եր վոչ բավարար քանակությամբ, իսկ դա անդրագանում եր արդիքինալանի կատարման վրա: Ուղար-նիկները յելքը գտան՝ ստեղծել միջանցիկ բրիգադ բոլոր համբա-րություններում բանվորների ողակային խմբերից: Միջանցիկ բրիգադը իր հիմնական նպատակն է դարձել ոժանդակել արտա-գրության կանոնավոր պլանավորման առանձին համբարություն-ներում: Մի ամենաչնչին կանգառումը բրիգադի խորհրդակցու-թյան նյութ եր դառնում: Արդյունքն յեղավ այն, վոր գործա-րանում պտկսեցին ընդհատումները և ուժեղացավ կապը համբա-րությունների միջնե:

Մի շարք դեպքերում ուղարնիկները հիմնական ուշադրու-թյունը դարձնում են պլանավորման խնդիրներին, կամավոր-պլանավորողները (որինակ «Կարմիր Պուտիլկեցում») գործարան-ներում ոգնում են պլանային բյուրոներին համբարությունները իրար հետ ավելի սացիոնալ կերպով կապելու և ղեկավարության բարձրագույն տեմպերը ապահովելու:

Վերջին տարիները մեծ չափով կիրառվում են այսպես կոչ-ված՝ բանվորական առաջարկությունների հավաքները: Առա-ջարկությունների չաժամկետթեսական հավաքի միտքը պատկա-նում է Ձերժինսկու անվան գործարանին: Բանվոր-ուացիոնալի-զատորները ստանում են «առաջարկների փոխառության» արի-գացիաներ և մասնակցում են արժեքավոր նվերների խաղար-կության: Գործարանում մեծ ֆոնդ է հատկացված բանվորական գյուտարարությունն ու հնարագիտությունը պարզեատրելու համար:

Ստալինի անվան գործարանի (Լենինգրադ) առաջարկու-թյամբ բոլոր ձեռնարկություններում պիտի կատարվի սարքավո-րության ուժի վերահամար: Ամեն մի մեքենա ստանում է «Վկայա-թուղթ»՝ պասպորտ, վորը վորոշում է նրա արտադրողական ըն-դունակությունը:

Դրանց հետ կապ ունի հանդիպական նորմաների և հանդի-պական արդիքինալանի կազմակերպությունը: Հանդիպական արդիքինալանի նախաձեռնողը հանդիսացել է կարլ Մար-քսի անվան (Լենինգրադ) գործարանը: Գործարանում աշխատող-ների ձեռներեցությամբ բարձրում սահմանված ստուգիչ թվերը ստուգվում են անժիջապես համբարություններում և ձշավում են

բանվորական առաջարկությունների հանդիպական տարափից հետո Մի շարք ձեռնարկություններում բանվորների պահանջով արդֆինպլանները գգալիորեն ընդարձակվում են:

Հանդիպական արդֆինպլանը, — արդյունաբերական կուսակցության գլխավորների՝ Ռամզինի և Ֆյոդորովի խոստովանությամբ, — վերջնականապես ուժաթափ արին վնասարարությունը արդյունաբերության մեջ։ Հենց այդ մեկը վկայում է այն մասին, թե ինչ ահազին նշանակություն ունի հանդիպական արդֆինպլանի գաղափարը, վորպես սոցմշրջան և հարվածայնության բարձրագույն ձև։

Սոցիալստական մրցությունը և հարվածայնությունը առաջ բերին անհրաժեշտություն արմատականապես վերակառուցելու այսպիս կոչված արտադրական խորհրդակցությունները, վորոնք քանի գնում, այնքան ավելի յեն դառնում լայն մասսաներին արտադրության կառավարելու գործին գրավելու հիմնական մեթոդներ։

1928 թվին գլխավորապես արտադրական խորհրդակցությունների և հանձնաժողովների միջոցով յեղել են 63.665 առաջար կություններ, 1929 թվին — 110.987 առաջարկություններ։

Ուղարնիկ-բանվորը քանի գնում, դառնում և արտադրության մեջ կենտրոնական ֆիգուրա։

Մասսայական հարվածային շարժումը նոր աշխատավորական կուլտուրայի արդյունքն եւ «Ամենից շատ աչքի ընկնողը մրցության մեջ այն եւ, — ասել եւ ընկ. Ստալինը Համկոմկուսի ԽVI-րդ համագումարում, — վոր նա արմատական հեղաշրջում եւ առաջ բերում մարդկանց հայացքներում աշխատանքի վրա, վորովհետեւ նա աշխատանքը ամոթալի և ծանր նեղությունից, ինչպես առաջ եր համարվում, դարձնում եւ պատվի, փառքի, արիության և հերոսություն խնդիր»

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԱԶԳԵՐԻ ՅԵՂԱՅ- ՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիստների և կալվածատերերի իշխանության տապալումը 1917 թվականի Հոկտեմբերին հնարավոր եւ զարձրել ազգերի կատարյալ ազատությունը, նրանց կատարյալ իրավականապարությունը և անկախությունը։

Հոկտեմբերից հետո անցած 14 տարին և Խորհրդային Միության սահմանադրության 8 տարվա աշխատանքը ավելի ևս ամրացրին ազգերի խորհրդային ընտանիքը Խորհրդային ինքնուրույն հանրապետությունները, վորոնք ծագում առան պրոլետարական հաղթական հեղափոխությունից հետո, ստիպված եյին համառ կովի մեջ՝ հականեղափոխության և ոտարյերկրյա իմպերիալիստների դեմ՝ պաշտպանել իրենց գոյության իրավունքը, սոցիալիստական շինարարության իրավունքը։ Դեռ ևս Խորհրդային Միության կազմակերպվելուց շատ առաջ Խորհրդային ինքնուրույն հանրապետությունները միացել եյին Խորհրդային փերատիվ Ռուսաստանի շուրջը և կնքել եյին պայմանագրեր՝ միասին գործելու արտաքին և ներքին հականեղափոխության դեմ կովելիս և համագործակցելու տնտեսական ասպարիզում, Սակայն փոխ-հարաբերությունների այդ ձեւը բավական չեր հեղափոխության հետեւյալ ետապում, յերբ բանվորները և գյուղացիները սկսել եյին տնտեսության վերականգնման դերը, տնտեսության, վոր քայլքայվել եր իմպերիալիստական և քաղաքացիական կոփիլների ժամանակ։ Քաղաքացիական պատերազմը վերջացնելուց հետո պահանջվեց կազմել բոլոր հանրապետությունների միասնական յեղբայրական միություն, վորը վերջնականապես ձեւակերպվեց Խորհրդային Միության սահմանադրության մեջ։

Մեր սահմանադրությունը (կոնստիտուցիա) պրոլետարական դիկտատուրայի և ազգերի յեղբայրական համագործակցության հզոր լծակն եւ Մենք վոչ մի բռպե չենք թագնում, վոր մեր սահմանադրությունը բանվոր դասակարգի ձեռքում ամենազորեղ զենքերից մեկն եպաշտպանելու համար աշխատավորների շահերը և ջախջախելու համար կապիտալիստական տարրերը, ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում։ Սահմանադրության վերջնական նպատակն եւ — վոչնչացնել մարդու միջոցով մարդուն շահագործելու փաստը։ Մենք չենք ծածկում մեր պետության, հետեւապես նաև սահմանադրության դասակարգային եյությունը։

